

**Պ Ա Շ Տ Օ Ն**

**ՓԱՌԱԲԱՆՈՒԹԵԱՆ**

**ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ**

**ԳԵՐԱՊ. ԻԳՆԱՏԻՈՍ ՓԱՓԱԶՆԱՆ**

**Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵՆԷ**

---

**ԵՐՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ**

---

**Վ Ե Ն Ե Տ Ի Կ**

**Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅՆ ԳԱԶԱՐՈՒ**

1910

կարգ ու կանոն ամսուսան ջերմեամանդարեան  
սուրբ Աստուածածնայ

Տիրպէս զի այս բարեպաշտութիւնը չէ  
թէ միայն հաճոյ ու ընդունելի ըլլայ սուրբ  
Աստուածածնայ, այլ և ընտղներուն ալ  
զուարճալի ու հոգևոր զբօսանք մը, պէտք  
է սլահել աս կարգս: — Տանը մէջ ամենէն  
աղէկ տեղը կամ սենեակը, ուր որ սո-  
վորութիւն ունին մէկտեղ ժողվուած ա-  
ղօթք ընելու, պէտք է դնել ջերմեռանդա-  
շարժ աղուոր պատկեր մը սուրբ Աս-  
տուածածնայ, ու որչափ որ կարելի է  
զանազան մոմերով ու ծաղկիներով զար-  
դարել զանիկայ, անանկ որ տեսնողները  
շարժէ ու յորդորէ ջերմեռանդութիւն ընե-  
լու:

Այն իրիկունը որ պիտի մտնեն մայիսի  
առջի օրը, ամէնքը մէկտեղ ժողվուած խո-  
րանին առջևը մոմերը վառելով՝ պիտի ըսուի  
ջերմեռանդութեամբ վարդարանը կամ պը-  
սակը և կամ լիթանիայն սուրբ Աստուա-  
ծածնայ: Անկից ետքը ըսելու է ինչ որ  
այլ սովորական աղօթք ունին իրենց տա-

նը մէջ . միայն թէ ետքի աղօթքները  
չափաւոր ըլլայ՝ որ չձանձրանան ու ա-  
ղօթքներուն շատութեան համար չը-  
փրոտան որ շուտ լմրննայ, այլ ջանան  
ընել ամենայն զգաստութեամբ ու ջերմե-  
ռանդութեամբ :

Աղօթքները լմրննալէն ետքը՝ ամէն մարդ  
վիճակաւ հանելու է մէյմէկ հոգևոր բան,  
(որ պիտի առաջուց գրուած ու պատրաս-  
տած ըլլայ մասնաւոր պզտի թղթերու  
վրայ), որպէս զի այն կարճ հոգևոր խօս-  
քերը ամէն մէկին ըլլան հոգևոր կրթու-  
թիւն մայիս ամսուան մէջ : Այս հոգևոր  
խօսքերս, որ կ'ըսուին Հոգևոր ծաղիկներ,  
պիտի դնենք ետևի գլխուն մէջը՝ տասն-  
երկու հատ, տասներկու հոգիի համար,  
որպէս զի դիւրին ըլլայ բարեպաշտներուն  
առանց աշխատանայ օրինակել ու բանե-  
ցընել :

Այս թղթերէն զատ (որ ամէն մէկը  
իրեն համար պիտի հանէ), սէտք է վի-  
ճակաւ հանել մէկ ուրիշ հոգևոր ծաղիկ  
մ'ալ, որ ծառայէ ամենուն մէկտեղ մայիսի  
առջի օրը : Այս հոգևոր ծաղիկն ալ կը  
գանաս ետևի գլխուն մէջը, ուր պիտի  
դնենք երսուներմէկ հատ՝ մայիս ամսուն  
օրերուն համրանցովը :

Այս վիճակները կամ հոգևոր ծաղիկները հանելէն ետքը, պիտի կարդացուի առջի օրուան մտածականը հանդերձ ետևի պրտողով ու աղօթքովը, որ կը ծառայեն ամէն մարդու:

Առջի իրիկուան համար ըսածնիս, պէտք է ընել ամէն իրիկուն մայիս ամսուան մէջը, բաց ի առջի վիճակէն, որ պիտի ծառայէ ամէն մէկին բոլոր ամսուան համար. իսկ երկրորդ վիճակը օրէ օր պիտի հանուի:

Մտածականը կարդալու ատեն մէյմէկ թիչ մտածելու է ամէն մէկ բաժնին վրայ, իսկ ետքի զրուած պտղին հառաչանքը օրուան մէջ շատ անգամ սրտանց զրուցելու է:

Ասկից ի զատ ամէն շաբաթ կամ գոնէ տասներկինգ օրն անգամ մը պէտք է մասնաւոր ջերմեռանդութիւն ընել, խոստովանանք ըլլալով ու սրբութիւն առնելով: Էր ամէն օր տնէն դուրս ելլելու ատենդ ջանա՛ որ երթաս այցելութիւն ընես եկեղեցւոյ մը, կամ խորանի ու պատկերի մը սուրբ ճիւղամօրը: Վերջապէս բոլոր ամսուան մէջ տնանկ կենցաղավարէ, որով ճանչցուիս թէ նուիրուած ես սուրբ

Աստուածածնայ . ջանալով գործքերդ ա-  
նանկ ընել, որ անհաճոյ չերևնայ իրեն  
սուրբ ու մաքուր աչքերուն : Եւ եր-  
բոր ամիսը լմըննայ, ըսու սիրտդ ու  
հոգիդ նուիրէ սուրբ Աստուածածնայ մաս-  
նաւոր աղօթքով մը, որ պիտի դնենք մը-  
տածականներէն ետքը :

## ՅԱՂԻԿԻ ՀՈԳԵԻՈՐ

Տասուերկու յարի գործքեր, որ վիսակաւ  
յամենելու ե ընտանեաց՝ Մայիսի սաչի  
օրուան իրիկունը

Ա. — Առաւօտանց անկողնէն ելլելու ա-  
տենդ ջանա՛ որ առանց հեղգութեան ելլես,  
որպէս զի օրուան սկիզբը զուարթութեամբ  
ըլլայ. ու նայէ՛ որ պարկեշտութեամբ հա-  
գուիս ու մտածես ամէն օրուան հոգևոր  
կրթութիւնդ :

Բ. — Չանա՛ ամէն օր պատարագ լսել,  
ու ջերմեռանդութեամբ ընել սուրբ Աս-  
տուածածնայ պաշտօնը :

Գ. — Ամէն օր երբ քիչ մը ատեն ըլլայ՝  
կարդաս հոգևոր գիրք մը. ինչպէս վարք

սրբոց, կամ այլ խրատական բաներ փախչելով ան սնտոի գրքերէն, որ բու վիճակէդ դուրս են:

Գ. — Չանա՛ ամէն օր զքեզ զրկելու մէկ գրօսանքէ մը, թէպէտ անմեղ ու պատշաճ բան ըլլայ. ինչպէս նախաճաշիկ ընելէն, կամ զուարճալի բան մը տեսնալէն ու լսելէն, կամ անուշահոտ ծաղիկ մը հոտուրտալէն, և այլ ասոր նման բաներէն:

Ե. — Աղքատներու վրայ զուժ ցըցուր, տալով իրենց ողորմութիւն մը. թէ ոչ ուրիշ բան ալ չունենաս տալու, գոնէ նախաճաշիկդ տուր:

Զ. — Ամէն օր՝ բանի մը ձևոր չզարկած, ծունկ չոգէ՛ օգնութիւն ու պաշտօնանութիւն խնդրէ սուրբ Աստուածածնէն:

Է. — Ամէն օր տնէն ելլելու մտնալու ատենդ՝ սուրբ Աստուածածնայ պառկերը պա՛գ, ու ըսէ՛ իրեն մէկ Ողջոյն քեզ Մարիամ մը:

Ը. — Չանա՛ որ աղէկ հնազանդութիւն ընես քեզմէ մեծերուն, ու անոնց հրամանը սիրով կատարէ՛ առանց ուշանալու. միայն թէ ըսածնին չըլլայ մեղք, կամ Աստուծոյ անհաճոյ բան մը:

Թ. — Չգոյշ կեցիր ուրիշի վրայ գէշ խօ-

սելէն ու բամբասելէն, կամ ուրիշը ծա-  
ղրելէն, թէպէտ և ըսածդ թեթեւ բան-  
ըլլայ. որ գէշ չսորվիս, ու մեծ բաներու  
մէջ չիյնաս:

Ժ. — Ամէն օր ջանա՛ որ բարի օրինակով  
մը կամ անոյշ խօսքերով վաստըկիս ըն-  
կերներուդ միջէն զանիկայ՝ որ քան զա-  
մէնը անփոյթ է հոգևորի. նայէ՛ որ տա-  
նիս վինքը եկեղեցին. յորդորես որ ըսէ  
սուրբ Աստուածածնայ պսակը, խոստո-  
վանի, սրբութիւն աննէ, կամ այլ այս-  
պիսի բարեգործութիւններ ընէ:

ԺԱ. — Չանա՛ ամէն օր պզտիկ ճըգ-  
նութիւն մը ընել, կամ նեղութիւն մը  
քաշել սուրբ Աստուածածնայ փառաց  
համար: Աս ճգնութիւնս կրնայ ըլլալ, ևր-  
բոր սեղանին վրայ մէկ աղէկ սիրած կե-  
րակուրդ գայ, կամ ամենևին չուտելով  
անկից, և կամ քիչ ուտելով. կամ թէ  
սեղանէն դուրս ջուր չխմելով, թէպէտ  
և ծարաւ ունենաս:

ԺԲ. — Չանա՛ որ այս ամսուան մէջ նե-  
րելի ու թեթեւ մեղքէ ալ զգուշանաս:



## ԾԱՂԻԿՔ ՀՈԳԵԻՈՐ

Երսուանկէկ յարի գործքեր, որ Մայիս աւ-  
տանն մէջ աւելն օր հանկարէ է վիճակաւ

Ա. — Սուրբ Աստուածածնայ անունը ո՛ւր  
որ գրուած տեսնաս՝ համբուրէ՛ ջերմե-  
ռանդութեամբ:

Բ. — Պատարագ ընել տուր, կամ գոնէ  
մէկ պատարագ մը աւելի լսէ՛ քաւարանին  
մէջ եղած ան հոգիներուն համար, որոնք  
որ իրենց կենացը մէջ աւելի ջերմեռանդ  
են եղեր սուրբ Աստուածածնայ:

Գ. — Քանի որ միտքդ ինկնայ սուրբ Աս-  
տուածածնայ յիշատակը, ջանա՛ որ ըսես  
մէկ Աղջոյն քեզ Մարիամ մը:

Դ. — Առաւօտանց հագուածիդ պէս, ու  
իրիկունն ալ հանուելէդ առաջ՝ դառնալով  
դէպ ի մէկ եկեղեցի մը, կամ մէկ ջեր-  
մեռանդաշարժ պատկեր մը սուրբ Աս-  
տուածածնայ, ինդրէ՛ իր օրհնութիւնը քու  
վրայ:

Ե. — Չանա՛ մէկ բարիք մը ընել ան-  
մարդուն, որուն հետ որ կարծես թէ ներ-



հակութիւն մը ունիս, կամ թէ ատենօք  
փրաս մը տուեր ես իրեն:

Չ. — Մասնաւոր զգուշութեամբ պահէ՛  
զգայտրանքդ, մանաւանդ աշուրներդ:

Ի. — Ըսէ՛ տասներհինգ տուն վարդարանին  
երեք մասին մէկը, կամ սուրբ Աստուա-  
ծածնայ պսակը. զրկելով զքեզ մէկ զբօ-  
սանքէ մը:

Ը. — Օգնութիւն մը ըրէ՛ քաւարանի այն  
հոգիներուն, որ աւելի ջերմեռանդ են սուրբ  
Աստուածածնայ ու ըսէ՛ երեք Խ խորոց  
կարդացի:

Թ. — Պատարագ լսելու ատեն զգաստու-  
թեամբ ու պարկեշտութեամբ կեցիր ա-  
ռանց ասդին անդին նայելու:

Ժ. — Սուրբ Աստուածածնայ փառաց  
համար ջանա՛ որ պահես ան աղէկ խրատ-  
ներն ու կանոնները որ տրուած է քեզի՛  
բարի ըլլալու համար. մանաւանդ ան կա-  
սոնը, որ սովորաբար անփոյթ ես պա-  
հելու:

ԺԱ. — Չանա՛ որ ուրիշի նեղութիւն մը  
չտաս. մանաւանդ թէ՛ երբոր ուրիշը  
քեզի տալու ըլլայ, սիրով համբերես:

ԺԲ. — Նայէ՛ որ ջանք ունենաս կարդա-  
լուդ, աղօթքիդ և ամէն կարգիդ ու կա-  
նոններուդ, որ տրուած են քեզի:

ԺԳ. — Առաւօտանց կանուխ ամէն գործքէդ առաջ՝ նուիրէ՛ սուրբ Աստուածածնայ քու զգայարանքդ՝ ու ամէն գործողութիւնդ ալ որ պիտի ընես ան օրուան մէջ:

ԺԴ. Չանա՛ ամէն օր քիչ մը ատեն մտածական աւօթք ընել:

ԺԵ. — Պատարագ տեսնելու ատենդ Չանա՛ որ հոգևորապէս հաղորդուիս: Ըրէ՛ ներգործութիւն հաւատոյ, երկրպագութեան, զղջման, առաջադրութեան ու փափաքանաց սիրտդ ընդունելու զՅիսուս:

ԺԶ. — Թէ՛ որ վրադ մէկ սնտոխ ու աւելորդ զարդարանք մը ունիս, Չանա՛ վերցընել ու անոր գինը ողորմութիւն տալ աղքատներու:

ԺԷ. — Օրը երկու անգամ Չանա՛ որ ներգործութիւն զղջման ընես՝ պագնելով խաչելութիւնը:

ԺԸ. — Առաւօտանց արթընցածիդ պէս առանց տընւրնալու ելիր անկողնէն, որպէս զի օրուան սկիզբը թուլութեամբ ու ծուլութեամբ չըլլայ:

ԺԹ. — Չրկէ՛ զքեզ մէկ գրօսանքէ մը, թէպէտ և պատշաճ ու անվնաս բան մը ըլլայ:

Ի. — Օրուան մէջ քիչ մը ատեն կարդա՛ հոգևոր գիրք մը:

ԻՍ. — Իրիկունը պառկելէդ առաջ քննութիւն ըրէ խղճմտանքիդ :

ԻԲ. — Սեղանէն դուրս օրունան մէջ մի՛ ուտեր մի՛ խմեր բան մը առանց հարկաւորութեան :

ԻԳ. — Օրը երեք անգամ կտարէ քու կամքդ, նուիրելով սուրբ Աստուածածնայ այս ճգնութիւնս :

ԻԴ. — Ունեցած կերակրէդ կամ նախաճաշիկէդ ջանա՛ որ բաժին մը հանես աղքատի :

ԻԵ. — Գնա այցելութիւն մը ըրէ՛ բանտը եղողներուն, կամ հիւանդի մը. կամ թէ մէկ բանով մը մխիթարութիւն տուր նեղութեան մէջ եղողներուն :

ԻԶ. — Ջերմեռանդութիւն ընելով սուրբ Աստուածածնայ, իրեն գթութեանը յանձնէ զանոնք, անոնք որ մահացու մեղքի մէջ կը գտնուին :

ԻԷ. — Նայէ՛ որ խոնարհական գործք մը ընես սուրբ Աստուածածնայ սիրոյն համար :

ԻԸ. — Ջանա՛ որ մարմնաւոր ապաշխարանք մը քաշես խոստովանահօրդ հրամանովը :

ԻԹ. — Բարի ու հոգևոր գործքերու մէջ նայէ՛ որ ծուլութիւն չընես :

Լ. — Բազկատարած կենալով ըսէ՛ եօթը  
 փառք հօր ի պատիւ եօթը ջաւոց սուրբ  
 Աստուածածնայ:

ԼԱ. — Թողութիւն խնդրէ՛ սուրբ Աս-  
 տուածածնէն աս ամսուան մէջ ըրած  
 պակասութիւններուդ համար:

## ԱՌԱՋԻՆ ՕՐ

Թե ինչո՞հ հաւնար սա ամսաշան շերմեռան-  
 դոտրիւնը պետք է ընել

Ա. — Հոգւոյդ փրկութեանն համար մեծ  
 կարօտութիւն ունիս սուրբ Աստուածած-  
 նայ: Թէ որ անմեղ ես, գիտցիր որ քու  
 անմեղութիւնդ մեծ վտանգի մէջ է: Քանի՛  
 քանի մարդիկ որ քան զքեզ աւելի ան-  
 մեղ էին, ինկան մեղաց մէջ ու դատա-  
 պարտուեցան: Թէ որ ապաշխարող ես,  
 գիտցիր որ հաստատուն մնալդ ապահով  
 չէ: Առջի սովորութիւններդ, ան առիթ-  
 ները ու ան հին քարեկամներն որ ունիս,  
 կրնան զքեզ նորէն ձգել: Թէ որ մեղաւոր  
 ես, գիտցիր որ մեծ կարօտութիւն ունիս  
 սուրբ Աստուածածնայ, որպէս զի կարե-

նաս դառնալ ու զղջալ մեղացդ վրայ :  
 Սկսար շատ անգամ ապաշխարել, ու չի-  
 կըրցար գլուխ հանել. գիտցիր որ եթէ  
 սուրբ Աստուածածնայ միջնորդութիւնը  
 չըլլար, ինչուան հիմա կարելի է որ  
 կորսուած ըլլայիր :

Բ. — Աս ամսուան ջերմեռանդութեամբ  
 կընաս վաստըկիլ սուրբ Աստուածածնայ  
 պաշտպանութիւնը ու քու հոգւոյդ փրկու-  
 թիւնը : Անկարելի է որ ասանկ գթած  
 մայր մը մտիկ չընէ իր բարեպաշտ զաւ-  
 րին : Մէկ վարդարան մը ըսելու համար,  
 ու մէկ ծոմապահութիւն մը ընելու իր  
 սիրոյն, մասնաւոր շնորհքներ տուեր է  
 մեծամեծ մեղաւորներու. ուստի մտմտա-  
 թէ ի՞նչ բարիքներ պիտի ընէ քեզի աս  
 ամսուանս համար՝ որ բոլոր իր ծառայու-  
 թեանը պիտի նուիրես :

Գ. — Վայ քեզի՝ թէ որ կորսնցնես  
 աս շնորհքս. վայ՝ թէ որ սկսիս, ու  
 քանի մը օրէն անհոգ ըլլալով թողուս աս  
 ջերմեռանդութիւնս : Ո՛վ գիտէ թէ աս  
 վերջին շնորհքն է որ Աստուած կու տայ  
 քեզի մեղքէդ դառնալու համար : Ո՛վ գիտէ  
 թէ աս ջերմեռանդութեանս հետ կապուած  
 ըլլայ քու հոգւոյդ փրկութեան ապահո-

վութիւնը: Եւ ո՛վ գիտէ թէ աս ամիսս  
 ըլլայ քու կենացդ ետքի ամիսը: Կարե-  
 նալը մէկ պզտի բանով մը վաստրկիլ ա-  
 սանկ մեծ ու զօրաւոր պաշտպանութիւնը  
 սուրբ Աստուածածնայ, ու անհոգ ըլլալով  
 շքնել զանիկայ, ի՛նչ մեծ ցաւ ու խղճմը-  
 տանք պիտի ըլլայ մեռնելու ատենը: Ա-  
 դէկ մտմբտա՛ ու պատրաստէ՛ զքեզ:

Պատու: Սուրբ Աստուածածնայ մէկ պըզ-  
 տի պատկերը կամ հանդերձը պահէ՛ քու  
 վրադ, ու երբեմն միտքդ բերելով զսուրբ  
 կոյսը, սրտանց ըսէ՛ իրեն. Ո՛վ ամենա-  
 սուրբ կոյս Մարիամ, քեզի՛ կու տամ իմ  
 սիրտըս ու հոգիս: «Անկանխմբ առաջի բո  
 Աստուածածին, և աղաչիմք զանաբատ  
 զկոյսդ»:

## ԱՂՕԹՅՈՒՆ

Մայր ողորմութեան և ապաւէն փրկու-  
 թեան սուրբ կոյս Մարիամ, կը հաւտամ  
 ու կը դաւանիմ ճշմարիտ սրտով թէ,  
 դուն ըլլալովդ մայր Աստուծոյ՝ միջնորդ  
 հղար մեր փրկութեան: Կարօտ էինք քու  
 կուսական մայրութեանդ, որպէս զի  
 ունենանք մեր Յիսուս փրկիչը. ինչպէս

որ առանց քու աստուածամայրութեանդ  
 որդի էինք զատապարտութեան, ասանկ  
 ալ առանց քու բարեխօսութեանդ ամենե-  
 շին տկար ու անպիտան ենք մեր հոգին  
 փրկելու: Գիտեմ որ մայրական սիրովդ  
 կ'ուզես իմ փրկութիւնս. ես ալ անոր կը  
 փափաքիմ, սակայն մեղաւոր ըլլալով չեմ  
 ճանչնար հոգւոյս փրկութեան պէտք ե-  
 ղած բաները: Գիտեմ որ կը հոգաս ու կը  
 խնամես քու որդիքդ, ես ալ կը փափա-  
 քիմ անոնց մէջը գտնուիլ, որպէս զի ար-  
 ժանի ըլլամ քու խնամոցդ, սակայն  
 անարժանութիւնս կը վախցընէ զիս. ուս-  
 տի կ'աղաչեմ զքեզ մայր ողորմութեան,  
 մխիթարէ՛ զիս քու քաղցը սիրովդ:  
 տուր ինծի անանկ շնորհք մը, որ ասկից  
 ետքը ճշմարիտ որդիութիւն ընելով քե-  
 զը, աղէկ ծառայեմ Աստուծոյ ու հասնիմ  
 յաւիտենական փրկութեան:

---

## ԵՐԿՐՈՐԴ ՕՐ

### Հոգոյ փրկութեան վրայ

Ա. — Եկեր ես աշխարհ մինակ քու հոգիդ փրկելու համար: Աղէկ գիտցիր աւրանս: Չես եկեր ուսելու իմեւու համար, կամ մեծնալու՝ հագուելու և կապուելու, ևս առաւել մեղանչելու համար. այլ եկեր ես միայն փրկելու քու հոգիդ: Ի՞նչ օգուտ է քեզի աշխարհս վաստըկիլ, ու քու հոգիդ կորսընցընել: Թէ թագաւոր ես, կամ փիլիսոփայ, կամ մեծ կարդացող, ի՞նչ կրնան օգտել քեզի քու իշխանութիւնդ ու քու գիտութիւնդ՝ երբոր չես սորված քու հոգիդ փրկելը:

Բ. — Մարդուս փրկութիւնը անանկ բաներէն չէ, որ ապահով ըլլայ: Ստըկով ծախու չառնուիր, այլ աշխատանքով կը վաստըկուի, ու մէկ մահացու մեղքով ալ կը կորսուի: Փրկուելու համար շօգտեր որ մէկ հեղ մը անմեղ ու սրբուած ըլլայ մեղքերէն, այլ սէտք է որ նոյն սրբութեան ու անմեղութեան մէջը մնայ ու



տեէ ինչուան մահը: Ինչ ապահովութիւն  
ունիմ ես իմ հոգիս խաւրսելու: Առջի  
կեանքս անցուցեր եմ մեղքով ու անհո-  
գութեամբ: Հիմակուան կեանքս անանկ  
խառնափնդոր բան մըն է, որ ես ալ չեմ  
ճանչնար: Ասկից ետքի կեանքս ինչպէս  
պիտի ըլլայ, Աստուած գիտէ:

Գ. — Հոգին կորսնցընելը անանկ մնաս  
մըն է, որ դեղ ու ճար չունի: Թէ որ  
կորսնցընեմ մէկ տոնելիք մը, կամ դա-  
տաստան մը, կամ առողջութիւնս, կարելի  
է որ մէկ ճարը գտնուի. սակայն թէ որ  
անգամ մը կորսընցուցի իմ հոգիս, յաւի-  
տեան պիտի կորսուի: Թէ որ մէկ ձեռքս  
անպիտան ըլլայ, մէկալը կը մնայ՝ որ  
կրնամ բանեցընել. թէ որ մէկ ոտքս սախ-  
տի, մէկալով կրնամ քալելու ճարը գրա-  
նալ. թէ որ մէկ աչքս կուրնայ, մէկալով  
կրնամ տեսնալ. բայց հոգիս որ մէկ է՝  
երկուք չէ, կամ միայն կրնայ փրկուիլ,  
և կամ միայն դատապարտուիլ: Հապա  
ինչո՞ւ համար ասանկ անհոգ եմ իմ հո-  
գիս փրկելու. կ'երևնայ որ իմ փրկու-  
թիւնս ապահով դրեր եմ մտքիս մէջը:  
Կ'ապրիմ առանց մտմտալու, և չգիտեմ  
թէ հիմա որ մեռնելու ըլլամ՝ ո՞ւր պիտի  
երթայ իմ հոգիս:

Պտուղ : Գնա՛ սուրբ Աստուածածնայ  
 պատկերի մը առջև, ու բոլորով սրտիւ  
 յանձնէ՛ քու հոգիդ իրեն բարեխօսութեա-  
 նը, ու ըսէ. «Աղախին Աստուծոյ և մայր,  
 բարձրասցի պատիւ քո ինև, և ցուցցի  
 փրկութիւն իմ քև» :

### Ա.Ղ.ՕԹ.Բ.

Թէ՛ որ այսչափ սիրելի է ինծի աշ-  
 խըրքիս ողորմելի կեանքը, ո՛րչափ աւելի  
 պիտի ըլլայ յաւիտենական երանութիւնը  
 արքայութեան մէջ. սակայն ես կուրցած  
 ըլլալով ու խաւարեալ մեղքով՝ չեմ տես-  
 ներ իմ բարիքս, չեմ ճանչնար իմ օ-  
 գուտս . ուստի արքայութիւնը փնտռելու  
 տեղ, ու իմ հոգւոյս փրկութեան ետևէն  
 իյնելու, աշխըրքիս ունայն բաներուն հետ  
 եմ, մանաւանդ թէ՛ հոգիս կորսնցրնելու :  
 Կ'աղաչեմ զքեզ մայր Աստուծոյ, դուն որ  
 միջնորդ եղար փրկութեան, լուսաւորէ՛  
 իմ խաւարեալ միտքս, կակըղցուր իմ  
 քաղացեալ սիրտս, որ ճանչնամ իմ հոգ-  
 ւոյս յաւիտենական բարիքը, ու անոր  
 փափաքնլով ծառայեմ Աստուծոյ բոլորով  
 սրտիւ, ու քուկին զօրաւոր միջնորդու-  
 թեանդ համեմ արքայութեան :

## ԵՐՐՈՐԳ ՕՐ

Մարդուս հոգւոյն ազնուութեանը վրայ

Ա. — Մտմբտա թէ քու հոգիդ ո՛րչափ ազնիւ ու պատուական բան մըն է՝ Աստուծոյ ստեղծուածը ըլլալուն համար: Ո՛վ ըրեր է զքեզ. — Աստուած իր ձեռքովը: Որո՞նք պատկերն ես դուն. — Աստուծոյ պատկերը ու նմանութիւնը: Աս ըսածս անանկ ճշմարտութիւն մըն է, որ Աստուած յայտնեը է իր անստելի խօսքովը. «Արար Աստուած զմարդն ի պատկեր իւր. ըստ պատկերի Աստուծոյ արար զնա» (Մենդ. Ա. 27): Ինչո՞ւ համար այսչափ անհոգ ես քու հոգւոյդ ազնուութեանը վրայ, ու մեղքով կ'ուզես կորսնցընել այդ գեղեցիկ Աստուծոյ պատկերը՝ սատանային փորձութիւններուն մտիկ ընելով:

Բ. — Մտմբտա թէ ո՛րչափ ազնիւ պիտի ըլլայ քու հոգիդ, որ ծախու առնուած է աստուածային արիւնով: Գիտես որ կորսուած է իր յաւիտենական դատապարտութեամբ. ո՛վ խալըսեց զքեզ սատանային

ձեռքէն: — Խալըսեց հայրն երկնաւոր: Ի՞նչ բանով խալըսեց. — Ա՛ջ տակի տալով և ոչ արծաթ, այլ անգին ու պատուական կեանքովը ու արիւնով իր միածին որդւոյն: Աղէկ մտմբտա, թէ աս ազնիւ հոգիդ, որ ասանկ սուղ առնուած է, նորէն պիտի կորսնցընես մէկ չար ցանկութեան մը համար, կամ մէկ ոչինչ բանի մը համար:

Գ. — Մտմբտա հոգւոյ ազնուութիւնը, որ ստեղծուեր է յաւիտենական երանութեան համար: Գիտես որ որդեգրած ես երկնաւոր թագաւորին, ու մէկ օր մը պիտի նստիս իր քովը, ու իրեն հետ թագաւորութիւն քշես: Պէտք է որ թագաւորի տղան իր հօրը տունը աղէկ կենայ ու բարի ըլլայ, որպէս զի ինքն ալ ետքը կարենայ թագաւորել: Մտածէ թէ դուն որ ժառանգ ես արքայութեան, քու կեանքն ի՞նչ բանով կ'անցընես, ու ո՛ւր կը կենաս: Թէ որ աղէկ մտմբտաս, կը զրտնաս զքեզ տղմոյ ու աղտեղութեանց մէջ անբան անասունի մը պէս: Կ'երևայ թէ չես ամբշնար ու չես վախնար՝ Աստուծմէ հեռանալուդ համար:

Պատուդ: Աղէկ քննութիւն մը ըրէ՛ խրդն-

մըտանքիդ, ու թէ որ մահացու մեղք մը  
 գտնաս հոգւոյդ վրայ գնա՛ շուտով խոս-  
 տովանանք եղի՛ր, ու առաջադրէ՛ որ մէյ  
 մ'ալ չիյնաս ան մեղքին մէջ: Միջնորդ  
 բռնէ՛ քեզի սուրբ Աստուածածինը, ու ըսէ՛  
 իրեն. « Չեռն տուր անկելոյս, սաճա՛յր  
 երկնային. փառաւորեա՛ զորդիդ քո ի քեզ՝  
 աստուածօրէն ինձ հրաշագործել քաւու-  
 թիւն և ողորմութիւն »:

## ԱՂՕԹՔ

Գիտեմ ճշմարիտ հաւատքովս, թէ ըս-  
 տեղծուած եմ Աստուծոյ, ու իմ հոգիս  
 իրեն պատկերն է: Կորսուած էի յաւի-  
 տենաւկան դատապարտութեամբ, ու ծա-  
 խու առնուեցայ Յիսուսին ամենասուրբ  
 արիւնովը, զարդարուեցայ աստուածային  
 շնորհքներով ու եղայ որդեգիր և ժառանգ  
 արքայութեան: Բայց ես անհոգ ըլլալով  
 աս ամէն բարեբարութեանց, նորէն սե-  
 ցուցի իմ հոգիս՝ աղտոտեցի զանազան  
 մեղքով, հեռացայ իմ ստեղծողէս, գերի  
 եղայ սատանայի: Կ'աղաչեմ զքեզ, սուրբ  
 կոյս Մարիամ. դուն որ քու անարատ  
 մաքրութեամբ արժանի եղար մայր Աս-

տուժոյ ըլլալու, ընդունէ իմ ապաշխարութիւնս, որ բոլորով սրտիւ դառնալով մեղքերէն, կը ցաւիմ ու կը զղջամ իմ կուրութեանս վրայ, որով չկրցայ ճանշնալ հոգւոյս ազնուութիւնը: Տուր ինձի հատատուն շնորհք մը, որով կարենամ ասկից ետքը սուրբ սրտով ծառայել Աստուծոյ, ու արժանի ըլլալ երկնից արքայութեան:

## ՉՈՐՐՈՐԿ ԹԲ

Մարմնոյ սաստիչութեան վրայ

Ա. — Կը մեղանչիս մարմինդ հանգչեցընելու համար, ու չես մտմբտար որ մեղք ընելովդ՝ աւելի փնաս կու տաս անոր: Մի՛ կարծեր թէ հոգիդ կորանցընելով՝ մարմինդ առողջ կը պահես: Գիտցիր որ կամ երկուքն ալ պիտի ըլլան երանելի, և կամ երկուքն ալ դատապարտելի: Թէ որ դատապարտուի առ քու մարմինդ, չունիս ուրիշ մ'ալ, որ կարենաս զանկայ երանելի ընել: Դժոխքին տանջանքը բոլոր մարմինդ իր ամէն բաներովը պի-

տի տանջէ . չէ թէ աս աշխրբքիս ցա-  
ւերուն պէս, որ կ'ըլլան մինակ մէկ տեղ  
մը, կամ մէկ մասնաւոր անդամի մը վրայ :  
Ծանր կու գայ քեզի մէկ զլխու ցաւ մը  
քաշել, պինդ անկողնոյ մը վրայ պառկիլ,  
անհամ կերակուր մը ուտել ու անհան-  
գիստ տեղ մը նստիլ : Հապա ինչպէս պի-  
տի դիմանաս դժոխքին մէջ սաստիկ տան-  
ջանքներուն :

Բ. — Որչափ փափաք ու հպարտու-  
թիւն ունիս քու մարմինդ զարդարե-  
լու, գիտցիր որ մեռնելէդ հարը գլուխդ  
պիտի մնայ մէկ չոր ոսկր մը առանց  
մորթի, առանց աչքի, առանց բերնի, ա-  
ռանց լեզուի . ձեռքդ ոտքդ առանց մսի .  
ու բոլոր մարմինդ մէկ աման մը զարշա-  
հատութեան ու որդերու : Ասոնցմէ զատ  
թէ որ դժոխքը երթալու ըլլաս բոլոր  
մարմինդ ներսէն դրսէն կրակի մէջը պի-  
տի էրի մրկի . երեսդ սկնայ, մազերդ  
կորնճմրտի, լեզուդ կապուի, աչուրներդ  
կրակի պէս վառուի, ու դուն ալ պիտի  
ըլլաս սատանայի մը պէս : Աղէկ մտմբտա  
զասոնք :

Գ. — Թէ որ մարմինդ ուզենայ մե-  
ղանչել, պէտք է որ դուն քեզի ըսես .

ինչ օգուտ ունի աս մարմնոյս կամքը կատարել, ու ետքը դժոխքին կրակով յաւիտեան էրիւ ու տոչորիւ. քիչ մը ատեն զուարճանալ, ու ետքը յաւիտեան տանջուիլ: Թէ որ կ'ուզես մարմինդ սիրել ու զարդարել, ջանա՛ անանկ սիրես ու զարդարես, որ ըլլայ քեզի ճշմարիտ աղուորութիւն մը ու պարծանք արքայութեան մէջ:

Պատու: Ըրէ՛ մէկ մասնաւոր ճգնութիւն մը, որ ըլլայ ապաշխարանք ան աւելորդ զբօսանքներուն դէմ՝ որ ըրեր ես մարմինդ հանգչեցընելու համար. աղաչելով սուրբ Աստուածածինը, որ քեզի բարեխօս ըլլայ: Գիտցիր որ սուրբ Աստուածածինը չէ թէ մինակ իր ջերմեռանդներուն հոգւոյն պաշտպանն է, այլ և իրենց մարմնոյն, ինչպէս որ շատ հրաշքներ տեսնուած է. անոր համար աղաչէ՛ զինքը, ու ըսէ՛ Չերմեռանդութեամբ. « Հիւսեա՛ միացո՛ զմեղուցելոյս դստն հեծութիւն ընդ քուս՛դ երջանիկ և խնկաւորեալ հայցուածոց... զի ի քէն օգնեալ և բարեգործեալ...: կեցից Քրիստոսի որդւոյ քո և տնտն »:



## ԱՂՕԹՔ

Վայ իմին կուրութեանս որ մոռնալով հոգևոյս ազնուութիւնը, ու Աստուծոյ յաւիտենական բարիքն որ ինծի համար պատրաստեր է, մարմնոյս հանգստութեանը ետևէ ինկեր եմ: Չեմ մտմբտար որ մարմինս հոգալով, զէն կու տամ հոգևոյս, ու հոգիս կորսնցընելով՝ մարմինս ալ մէկտեղ պիտի կորսնցընեմ: Ո՛վ Աստուած իմ Յիսուս, լուսաւորէ՛ իմ խաւարեալ միտքս, որ ճանչնամ իմ ճշմարիտ հոգևոր բարիս, ու չխարուիմ աշխրբքիս սուտ բաներէն: Տո՛ւր ինծի քու շնորհքդ, որպէս զի սիրեմ նեղութիւն քաշելը քեզի համար, ու փախչիմ աշխրբքիս հանգստութենէն, որ զիս կը հեռացընէ քեզմէ: Կը փափաքիմ քեզի հետ մեռնիլ խաչին վրայ, քան թէ առանց քեզի թագաւորել աշխրբքիս մէջը: Մեծ հանգստութիւն է ինծի քու կամքդ կատարելը ու չարչարուիլը, քան թէ առանց քու կամացդ մեծութեան հասնիլ ու փառաւորուիլ: Ի՛նչ բարիք որ ունիմ՝ քեզմէ է. ու ի՛նչ աղէկ բանի ալ յոյս ունիմ, ան ալ քեզմով

պիտոր ըլլայ. ուստի կ'աղաչեմ զքեզ,  
 փրկիչ իմ Յիսուս, միջնորդութեամբ ա-  
 մէնօրհնեալ սուրբ մօրդ, արթընցուր իմ  
 թըմրած սիրտս, զքեզ սիրելու, զքեզ  
 փնտռելու, զքեզ տեսնալու, ու յաւի-  
 տեան ժառանգելու:

## ՀԻՆԳԵՐՈՐԳ ՕՐ

### Ժամանակի վրայ

Ա. — Կ'անցնի ժամանակը, ու անոր  
 հետ մէկտեղ իմ կեանքս ալ կը պակսի:  
 Տասնըհինգ, քսան, երեսուն, քառասուն տա-  
 րիներ պակսեր են իմ կեանքէս, մէյ  
 մ'ալ չեն դառնար, ու չգիտեմ թէ որչափ  
 մնացեր է, թէպէտ գիտեմ որ քիչ մնա-  
 ցած պիտի ըլլայ: Ժամանակ ըսածնիս՝  
 կարճ բան մըն է. օրերը կ'անցնին առանց  
 իմանալու: Թէ որ աս ժամանակս յաւի-  
 տենականութեան հետ կշիռք զարնելու  
 ըլլանք, չէ թէ մինակ կարճ է, այլ  
 և բան մը չէ անոր քովը:

Բ. — Ժամանակին կարճութիւնը ունի  
 հետը մէկ անգին օգուտ մը, որ կրնանք

իր կարճութեանը մէջ վաստըկիլ մէկ յաւիտենական երանութիւն մը: Ամէն վայրկեան կրնամ ինծի համար մէյմէկ աստիճանն փառաց աւելցընել արքայութեան մէջ: Քիչ մը ատեն թէ որ աղէ՛: մտմբտամ հոգևոյս բաները, կրնամ խալըսել իմ հոգիս սատանային ձեռքէն, ու դնել Աստուծոյ ձեռքը: Եթէ ամէն օր քիչ մը ատեն աղօթքի կամ պատարագ տեսնալու կամ հոգևոր գիրք մը կարդալու հետ ըլլամ, կրնամ հեռանալ մեղքէն ու ապահով ընել իմ հոգևոյս փրկութիւնը:

Գ. – Ժամանակին կարճութիւնը ունի հետը մէկ մեծ վախ մըն ալ: Ամէն ատեն կրնամ մեղանչել, կրնամ մեռնիլ, կրնամ դատապարտուիլ: Վայ ինձ, որ աս կարճ ժամանակիս մէջը կրնայի սուրբ ըլլալ, ու դեռ ասանկ մեղաւոր մնայի: Կորսընցուցի ժամանակս դատաւիկ բաներու մէջ, տղայութեան մէջ, խաղերու մէջ, գրօսանքի ու մեղքերու մէջ: Ի՞նչ օգուտ ունիմ հիմայ ձեռքս առջի ժամանակները դատարկ անցընելուս համար: Պիտի գայ օր մը, որ քիչ մը ատեն պիտի խնդրեմ Աստուծմէ ապաշխարելու համար, ու ան ալ պիտի չգտնուի յաւիտեանս յաւիտենից:

Պտուղ: Մասնաւոր ազօթք մը կամ ջերմեռանդութիւն մը ըրէ՛ Աստուածածնայ, գիտցի՛ր որ ան ջերմեռանդութեան ատենը չէ թէ մինակ դատարկ չանցնիր, հապա մեծ մեծ բարիքներու ալ պատճառ կ'ըլլայ քեզի: Ուստի ըսէ՛ սուրբ Աստուածածնայ. «Արտասուօք օգնեա՛ վտանգեցելոյս գովեա՛լդ ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն ծնօ՛ղդ Աստուծոյ»:

### ԱՂՕԹՔ

Ինչ մեծ բարիք է որ ինծի ըրեր ես Աստուած իմ Յիսուս, տալով ինծի ժամանակ որ պակսութիւններս շտկելով՝ հոգւոյս փրկութեան ետեւէ ըլլամ. սակայն ես անհոգ ըլլալով՝ չէ թէ մինակ դատարկ անցուցեր եմ իմ կեանքս, այլ մանաւանդ մեղքով կորսընցուցեր եմ ան ազնիւ ու անգին ատենը, որով կրնայի քեզի ծառայել ու իմ հոգիս փրկել: Ուստի բոլորով սրտիւ կը ցաւիմ ու կը զւշամ կորսընցնելուս վրայ, որ նորէն գտնալու ճարը չկայ. բայց կ'աղաչեմ քու զթութիւնդ, որ այսչափ համբերե՞ր ես իմին

անկարգութեանս, տաս ինծի քիչ մըն ալ  
 ատեն, որպէս զի կարենամ քու շնորհ-  
 քովդ ապաշխարել ըրածներուս վրայ, ու  
 շտկել իմ անթիւ պակսութիւններս : Կը  
 խնդրեմ քեզմէ՛ ալ սուրբ Աստուածածին,  
 որ կ'ուզես իմ հոգւոյս փրկութիւնը, բա-  
 րեխօ՛ս եղիր Յիսուսին որ ողորմի ու տայ  
 ինծի ժամանակ ապաշխարելու . ես ալ  
 կ'առաջադրեմ հաստատ սրտով՝ որ ասկից  
 ետքը իմ կեանքս անցընեմ Աստուծոյ ծա-  
 ռայութեան մէջ : Կը փափաքիմ մայր Աս-  
 տուծոյ՝ հաւատարիմ մնալ որդիութեանդ  
 մէջը, որպէս զի աշխարհիս վրայ վայելեմ  
 մայրական ինամքդ, ու ետքը արժանի  
 ըլլամ արքայութեան մէջն ալ զքեզ փա-  
 տաւորելու :

## ՎԵՑԵՐՈՒԴ ՕՐ

Մահացոս մեղաց վրայ

Ա. — Մտմըտա՛ թէ մահացու մեղք ը-  
 րած ատենդ ինչ ուզեր ես ընել : Ուզեր  
 ես քու կողմանէ՞ կռուիլ ու ոտից տակ  
 առնել քու տէրդ, քու ստեղծողդ, քու հայրդ,

քու փրկիչդ, քու ամէն բարիքդ ու մեծու-  
թիւնդ: Նայէ՛ որ ըրածդ ի՛նչ ամբարտա-  
ւանութիւն է, որպիսի՛ ապստամբութիւն,  
ապերախտութիւն ու անկարգութիւն: Կար-  
սընցուցիր Աստուծոյ շնորհքը, Աստուծոյ  
որդեգրութիւնը, առջի կենացդ բարեգոր-  
ծութիւնը, ու երկընքէն դժոխքը գլորե-  
ցար:

Բ. — Թէ՛ որ մեղաց մէջ ես՝ վայ  
քեզի. գիտցի՛ր որ Աստուած է քու թըշ-  
նամիդ, գիտցի՛ր որ սատանայի՛ն գերին  
ես: Կ՛գրօսնուս, ժուռ կու գաս, կը  
պառկիս, կ՛ելլես ու կը խնտաս. չգիտես  
որ եթէ Աստուած իր ձեռքը վրայէդ վեր-  
ցընէ, մէկէն կը մեռնիս ու կը դատա-  
պարտուիս: Հազարաւոր հրեշտակներ դը-  
ժոխք ինկան՝ մտքով գործուած մեղքի մը  
համար. հապա դուն ինչո՞ւ այսչափ մե-  
ղաց տէր ըլլալէն ետեւ ապահով կը կար-  
ծես զքեզ: Ի՛նչ կուրութիւն է ասիկայ:

Գ. -- Թէ՛ որ մեղքի մէջ ալ չես,  
գիտցի՛ր որ միշտ վտանգի մէջ ես մեղան-  
չելու: Մէկ սասախիկ փութութիւն մը, ու  
մէկ անյուշալի զիպուած մը կրնայ քեզի  
ըլլալ պատճառ մեղանչելու. մահաւանդ  
ուն ատենը՝ երբ դուն չես կարծեր:

Հրեշտակը երկինքը մեղանչեց . Ադամ  
 դրախտին մէջ . Յուդա ու Պետրոս առա-  
 քեալ մեղանչեցին Քրիստոսի դպրատան  
 մէջ : Ադէկ մամլտա ասիկայ՝ որ դուն  
 ալ եթէ հրեշտակի կեանք ունենաս, կամ  
 Ադամայ անմեղութիւնը, ու առաքեալնե-  
 րուն շնորհքը, կրնաս մէկ վայրկենի մը  
 մէջ սատանայ դառնալ : Մամլտա զա-  
 սոնք ու վախցիր :

Պտուղ : Թէ որ փորձութիւն ունենաս  
 մեղանչելու, առ ձեռք սուրբ Աստուա-  
 ծածնայ վարդարանը, ու ջերմեռանդու-  
 թեամբ պագնելով զանիկայ, յանձնէ՛ ի-  
 րեն քու սիրտդ ու հոգիդ : Գիտցիր որ  
 սուրբ Աստուածածնայ յիշատակը կը պահէ  
 զքեզ ամէն տեսակ փորձութիւններէն, ու  
 աղաչելով ըսէ իրեն. «Տարեխօսեա՛ վասն  
 անձանց մերոց և աղաչեա՛ զմիածին որ-  
 դիդ : Փրկել զմեզ ի փորձութենէ և յա-  
 մենայն վտանգից մերոց» :

## ԱՂՕԹԻՔ

Զգիտեմ թէ ընտո՛ր լամ ու ցաւիմ մեղ-  
 քերուս վրայ, փրկիչ իմ Յիսուս, որ մոռ-  
 նալով քու մեծութիւնդ, քու անթիւ-

բարերարութիւններդ, ուզեցի աւելի սա-  
 տանային ծառայել, քան թէ քու կամքդ  
 կատարել: Թէ որ մէկ բարիք մը մինակ  
 ըրած ըլլայիր ինծի, պէտք էր բոլոր  
 կեանքս քեզի տայի. ո՛ւր մնաց որ ամէն  
 բարիքս քեզմէ է, ու ես ալ առանց քու  
 պահպանութեանդ ոչինչ եմ: Վայ ի-  
 մին ապերախտութեանս, որ կուրցընելով  
 իմ հոգիս՝ չէ թէ մինակ չուզեցի ճանչ-  
 նալ քու բարերարութիւնդ, այլ և ծանր  
 մեղքերովս սրդողցուցի զքեզ իմ տէրս,  
 իմ փրկիչս, իմ բարերարս, իմ դատա-  
 ւորս: Սւտի կ'ամբընամ ու կը վախնամ  
 առջևդ երևնալու. գիտեմ որ արժանի եմ  
 դատապարտութեան, արժանի եմ ամէն  
 պատժոյ. սակայն կը հաւտամ որ քու  
 ողորմութիւնդ շատ աւելի ու անթիւ է  
 քան իմ մեղքերս. չէ թէ մինակ կը նե-  
 րես ողորմութեամբ ու կը թողուս մեղքե-  
 րուս պատիժները, այլ և կու տաս ինծի  
 քու շնորհքդ, որ ասկից ետքը մեռնիլս  
 յանձն առնում, քան թէ մահուցու մեղքով  
 մը զքեզ սրդողցընեմ: Կը ցաւիմ ու կը  
 զգուլիմ ըրած մեղքերէս. կ'առաջադրեմ  
 ու կը փափաքիմ աստուածային շնորհքովդ  
 մնալ ու մեռնիլ քու ծառայութեանդ մէջ,



փառաւորելով զանհուն ողորմութիւնդ, որ  
ցըցուցեր ես ինձի:

## ԵՕԹՆԵՐՈՐԻ ՕՐ

Մեղաց պատահասկերուս վրայ

Ա. — Աստուած կրնայ պատժել մեղքը՝  
ինչպէս որ ուզենայ: Մարդիկ մէկմէկէ  
վնաս քաշելով՝ շատ հեղ կ'ուզեն ռիսեր-  
նին առնուլ, ու չեն կրնար. սակայն Աս-  
տուած ասանկ չէ: Հերիք է որ կ'ամենայ,  
մէկէն կ'ըլլայ ուզածը: Կրնայ պատժել  
զքեզ վերցընելով քու առողջութիւնդ, ու  
նեցած ասլրանքդ, ընտանիքդ ու քու  
կեանքդ, հերիք է որ ուզենայ: Թէ որ  
մեղաց մէջ ես, կրնայ հիմայ ալ պատ-  
ժել զքեզ յանկարծակի մահուամբ մը, հե-  
րիք է որ ուզենայ: Մտմբտա՛ թէ գիտես  
կամ կրնաս իմանալ Աստուծոյ կամքը:  
Երբոր չգիտես, ինտո՞ր կրնաս մեղան-  
չիլ ու անհոգ կենալ քու մեղքիդ մէջ:

Բ. — Աստուած կ'ուզէ անտարակոյս  
պատժել զմեղքը: Թէ որ մեղք բրեր ես,  
գիտցիր որ Աստուած կ'ուզէ քեզմէ՛ մէկ

ապաշխարանք մը, կամ աս աշխրբիս  
մէջ, և կամ անդին ի հանդերձեալն .  
կամ զզջալով մեղքիդ վրայ, և կամ դը-  
ժոխքը տանջուելով: Ադամ ու Եւա թո-  
ղութիւնս ուրիշ իրենց անհնազանդութեա-  
նը, փրկուեցան ու սուրբ եղան . սա-  
կայն իրենց մեղքին մարմնաւոր պատիժը  
կը բաշուի կոր ինչուան հիմայ: Մի ըսեր  
թէ մեղք մը աւելի կամ մեղք մը պակաս  
եմ ըրեր, ինչ է եղեր. ինչու որ պատիժ  
մը աւելի, պատիժ մը պակաս ունենալը  
չատ մեծ բան է:

Գ. — Աստուած հիմայ ալ կը պատժէ  
քու մեղքերդ: Ան հիւանդութիւնները,  
ան քու տանդ ձախորդութիւնները, կոր-  
սրնցուցած պատիւդ, յոյսերուդ դատարկ  
ելելը, քու թշնամիներուդ զրպարտու-  
թիւնները, այդչափ սաստիկ ու անհատ-  
նում փորձութիւնները, շըլլայ թէ քու հին  
մոռցած մեղքերուդ համար ըլլան, որ դուն  
ամենեին չես մտքտար: Սակայն թէ  
որ ամէն կամքդ կատարուեր է, ու ամէն  
ուզածդ ալ յաջողութեամբ կ'ըլլայ, գիտ-  
ցի՛ր որ աս պատիժը աւելի մեծ է քան  
դատաջինը. ինչու որ անով հաստատ կը  
կենաս քու գէշ վարքիդ մէջ, ու մեղք մեղքի

վրայ դնելով՝ կրակդ կը շատցընես զժողո-  
քին մէջ : Ասոնց վրայ՝ թէ որ խղճմը-  
տանքդ ալ կորսնցուցեր ես, ու Աստուծոյ  
պատուհասներուն վախն ալ չունիս սրտիդ  
մէջ, վայ քեզի. գիտցի՛ր որ բոլորովին  
պատժուած ես աստուածային սաստիկ ար-  
դարութեամբը : Եթէ կայ մէկը, որ կարօտ  
ըլլայ մինակ սուրբ Աստուածածնայ պաշտ-  
պանութեանը, գիտցի՛ր որ գուն ես :

Պատու : Ինկի՛ր սուրբ Աստուածածնայ  
պատկերի մը առջև, ու խնդրէ իրմէ որ  
Աստուծոյ պատիժը հեռացընէ քեզմէ : Չա-  
նա՛ որ մեզքէ փախչելով շտկես բու : Վարբդ :  
Ո՛վ գիտէ թէ Աստուած ինչուան հիմա  
չպատժեր զքեզ սուրբ Աստուածածնայ  
բարեխօսութեանը համար. ուստի ըսէ՛ ի-  
րեն բոլորով սրտիւ. « Բաւեխօսեա՛, խըն-  
դրեա՛, աղաչեա՛, զի ըստ անճարելի մա-  
քրութեանդ և ահա՛ զքանիդ հաւատամ զըն-  
դունելութիւն » :

### Յ.Վ. ՕԹՓ

Վայ ինձի, որ հանչեալով Աստուծոյ  
ամենակարող ըլլալը, ու գիտեալով թէ  
մեզքէն կը զարշի, կ'ատէ ու կը պատժէ

րնողները, անհոգ եւ եղեր զգուշանալու,  
 մանաւանդ թէ ուզեր եւ մեղանչել առանց  
 մտմբտալու Աստուծոյ արդարութիւնը: Գի-  
 տեմ, տէր, որ շատ անգամ արժանի ե-  
 դեր եւ քու բարկութեանդ իմ մեղքերուս  
 համար. սակայն աստուածային ողորմու-  
 թիւնդ իմ ասպաշխարութիւնս ուզելով,  
 անպատիժ թողուցեր է իմ մեղքս: Թէ որ  
 պատժէիր, արդար դատաստանդ կը ցուղը-  
 նէիր. բայց ողորմեցար, քաղցր բարու-  
 թիւնդ երեցընելով ինձի, որպէս զի դառ-  
 նամ մեղքէս, պատկառիմ ըրածներէս, սի-  
 րեմ ողորմած տէրդ, ու ծառայելով քեզի՝  
 փառաւորեմ քու մեծութիւնդ: Եւ ո-  
 բովհետեւ ես ինձի տկար ըլլալով չեմ  
 կրնար հաստատ մնալ առաջադրութեանս  
 վրայ, կ'աղաչեմ զքեզ սուրբ Աստուա-  
 ծածին, եղի՛ր ինձի օգնական ու պաշտ-  
 պան, քու մայրական խնամքովդ պահէ՛  
 զիս սատանային փորձութիւններէն, որ  
 չըլլայ թէ մեղանչելով սրդողցընեմ իմ  
 քաղցր փրկիչս, ու զրկուիմ իրեն անուշ  
 տեսութենէն: Կը փափաքիմ հո՛ս քաշել  
 մեղքիս պատուհասը, որպէս զի խալքսիմ  
 յաւիտենական տանջանքէն:

## ՈՒԹԵՐՈՐԴՕՐ

### Մահոռան վրայ

Ա. — Պէտք է որ մեռնիմ մէկ օր մը. պիտի թողում իմ ընտանիքս, բարեկամներս, ունեցածս, ու այլ ամէն բաները՝ ինչուան աս մարմինս ալ: Աստեղի բնակութիւնս պիտի ըլլայ որդնալից գերեզմանը. իսկ անդիինը յաւիտենական տեղ մը, աղէկ թէ գէշ, չեմ գիտեր: Աս ըսածս անանկ ճշմարտութիւն մըն է, որ կարօտութիւն չունի հաւտալու. վասն զի ամէն օր կը տեսնամ իմ աչքովս: Կը մեռնին ծերերը, կը մեռնին պզտիկները, կը մեռնին աղքատները, կը մեռնին ունեւորները, կը մեռնին մեղաւորները, կը մեռնին սուրբերը. մեռաւ սուրբ Աստուածածինը, մեռաւ Յիսուս ալ. ուստի պէտք է որ ես ալ մեռնիմ:

Բ. — Գիտեմ որ պիտի մեռնիմ. բայց թէ ո՛ւր կամ ի՛նչպէս. արդեօք տան մէջ, թէ եկեղեցւոյ. նստած տեղս, թէ քալելու ատեն, ան չգիտեմ: Արդեօք մէկ պլգ-

տիկ տկարութեամբ մը, թէ մէկ ծանր հիւանդութեամբ, կամ յանկարծակի մահուամբ, չեմ գիտեր: Արդեօք ասկից երեսուն տարիէն՝ թէ քսան տարիէն, ո՞վ գիտէ՞ կարելի է ըլլալ աս տարի, աս ամսուան մէջ, կամ աս գիշերս: Մինակ Աստուած գիտէ, ու ըսեր է ինծի թէ մահը գիշերուան գողի պէս ան ատենը կու գայ, երբոր չես կարծեր:

Գ. — Անանկ կ'ապրիմ, իբր թէ ամենեին պիտի չմեռնիմ, ու չեմ ուզեր ալ միտքս բերել մահը: Թէ որ հիմայ մեռնելու ըլլամ, խղճմըտանքս անանկ աղտոտ է, որ աս աշխըրքէս կրնամ մէկէն դժոխք երթալ: Կը ճանչնամ զասիկայ ու կը վախնամ. բայց ճարը չեմ ուզեր մտմըտալ: Կը ձգեմ ամսէ ամիս ու օրէ օր, և քանի կ'երթամ՝ կը մօտենամ մահուան, ու մեղքնրս չեմ սրբեր: Թէ որ մեղքիս մէջը մեռնելու ըլլամ, ուսկից կրնամ գանգատիլ:

Պատու: Մտնել չոքելով գետինը, մամըտա՛լ քու հոգ ու մտիւնը ըլլալդ: Հոգէ ստեղծած է մարմինդ, ու նորէն հոգ պիտի դառնայ: Ուստի խնդրէ՛ սուրբ Աստուածածնէն, որ քովդ գտնուի հոգիդ տալու

ատենը, ու ինքն ըլլայ քեզի քարեխօս  
Յիսուսին առջևը: Ըսէ՛ իրեն բոլորով սըր-  
տիւ. «Օժանդակեա՛ թեոցդ աղօթիւք՝ խոս-  
տովանեալ մայրդ կենդանե:աց . և ելիցն  
իմ յերկրէս հովտէ՛ առանց լկանաց հե-  
տեել ի կեանս օթեվանացդ սլատրաստու-  
թեան. զի թեթեասցի կատարածն իմ՝  
ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ»:

### ԱՂՕԹՔ

Մայր կենդանութեան ու ապաւէն փրկ-  
կութեան սուրբ կոյս Մարիամ, զիտեմ  
որ անտարակոյս պիտի մեռնիմ . բայց  
չգիտնալով թէ ե՛րբ, ո՛ւր և ի՛նչպէս  
պիտի մեռնիմ, կը դիմեմ խոնարհութեամբ  
քու քաղցր մայրութեանդ, որ կ'ուզես ու  
կը փափաքիս ամենուն փրկութեանը: Կ'ա-  
ղաչեմ որդիական պաւկառանքով որ ու-  
ղորմիս ինձի, ու քու մայրական սի-  
րովդ խնամես իմ հոգիս. որպէս զի կեանքս  
բարի գործքերով անցընեմ, ու ամէն ա-  
տեն պատրաստ ըլլամ հոգիս քու ձեռքդ  
տալու: Կ'աղաչեմ զքեզ մայր ողորմու-  
թեան, օգնական եղիր ինձի ան սոսկալի  
օրը, երբոր հոգիս պիտի բաժնուի մաղ-

մինչս ու երթայ ահաւոր դատաւորիս առջև: Չունիմ բարեգործութիւն որ արդարանամ. չունիմ ինծի օգնական ու ապաւեն Տր քեզմէ զատ: Աւրախացո՛ւր իմ հոգիս քու պաշտօնանութեամբդ. մխիթարէ՛ զիս քու մայրական սիրովդ, որպէս զի արժանի ըլլամ արքայութեան մէջ փառաւորելու քու ողորմութիւնդ որ կը ցուցընես ինծի պէս մեղաւորին:

## ԻՆՆԵՐՈՐԴ ՕՐ

Դատաստանին վրայ

Ա. — Դատաստանին օրը պիտի երեւնամ Յիսուսի դատաւորին առջևը: Յիսուս իմ հայրս էր, ու ես զինքը չսիրեցի. իմ տէրս էր, ու ես զինքը թողուցի. իմ Աստուածս էր, ու ես զինքը անարգեցի: Պիտի իմացընէ ինծի իմ ապերախատութիւնս, իմ անհաւատարմութիւնս, ու սնհոգութիւնս: Ան ստուն ինչ երեսով կրնամ զիմել սուրբ Աստուածածնայ, որովհետեւ իր սիրելի որդին իմ մեղքովս խաչեցի: Չեմ կրնար աղաչել սլոհապան հրեշտա-



կէս, որովհետեւ իր բարի յորդորանքնե-  
րուն ականջ չտուի: Աշխրբբիս մէջը սա-  
տանան եղաւ իմ տէրս. ուստի ան օրն  
այ՛ անիկայ պիտի ըլլայ իմ թշնամիս:

Բ. — Դատաստանին օրը աշխրբբիս  
առջևը պիտի կարդացուին իմ ամէն մեղ-  
քերս: Ի՛նչ մեծ ամօթ պիտի ունենամ  
ընկերներուս առջեւ, որոնց մէջ հրեշ-  
տակ մը կը սեպուէի. ծնողացս առջև,  
որ զիս անմեղ կը կարծէին. խոստովա-  
նահօրս առջևը, որուն մեղքս չգոուցե-  
ցի: Պիտի կարդացուին ամէն մեղքերս,  
մտքիս ծածուկ խորհուրդները, սրտիս փա-  
փաքներն այլ որ չեն կատարուած. ան  
ամոչնալու հեշտութիւնները. ան մեղքերը՝  
որ մինակ կամ մէկի մը հետ ըրելը եմ  
տանը մէջ, կամ վարպետին տունը, կամ  
խանութը, կամ եկեղեցւոյ մէջ: Ի՛նչ  
խախտութիւն պիտի ըլլայ ան ստե՛ն:

Գ. — Դատաստանին օրը պիտի առ-  
նում իմ վճիռս: Յիսուս Քրիստոս կամ  
պիտի օրհնէ զիս սուրբերուն հետ, և  
կամ պիտի անիծէ մեղաւորներուն հետ:  
Ետքը՝ կամ Յիսուսին հետ պիտի երթամ  
արքայութիւն, կամ դատապարտելոց հետ:  
Պիտի ըստ իմ վճիռս չկրնար կախ մնալ


քիչ մը ատեն, և ոչ ետ դառնալ յաւիտեանս յաւիտենից: Ինչ մեծ ուրախութիւն է լսելը Յիսուսին բերնէն, թէ Եկէք իմ հօրս օրհնեալ զաւակները, վայլեցէք իմ արքայութիւնս: Ասոր ներհակ՝ ինչ սոսկալի բան պիտի ըլլայ լսելը, թէ Հեռացէք ինծմէ ո՛վ անիծածներ, ու զացէ՛ք տանջուելու յաւիտենական կրակին մէջ: Աս երկու վճռին ո՞րը պիտի ըլլայ իմս: Վայ ինծի, գիտեմ որ դատաստան պիտի երթամ, ու անհագութեամբ չեմ մըտմըտար անոր վրայ:

Պտուղ: Պառկելու ատենդ դի՛ր թէ Աստուծոյ առջևն ես, ու մտմըտա՛ թէ ինչ կ'ըսէ քեզի խղճմըտանքդ: Հիմակուրնէ միջնորդ բռնէ քեզի սուրբ Աստուածածինը, որ ան ատենը պարզերես ելլես Աստուծոյ առջևը, ու ըսէ՛ իրեն բոլորով սրախ. «Արասցես տօն ինձ բերկրութեան՝ զօրն իմ տագնապի, ողջացուցի՛չ երկանցն Եւայի»:

### ԱՂՕԹՔ

Քանի որ կը մտմըտամ իմ մեղքերս, կը գողամ ու կը սարսափիմ՝ թէ ինչպէս

պիտի երևնամ իմ դատաւորիս առջև :  
 Գիտեմ որ արժանի եմ ամէն պատժոյ .  
 գիտեմ որ չունիմ բարիք մը, որ մեղքե-  
 րուս շէմ գայ . այլ մանաւանդ Աստուծոյ  
 ինծի ըրած անթիւ ողորմութիւնները մոռ-  
 նալով, բունի տեղ չեմ դրած ինծի տուած  
 շնորհքները . ուստի անպատասխանի եմ,  
 երբոր առջևս դնէ իր ըրած բարիքները,  
 ու իմ սուգերախտութիւնս : Մի միայն յոյս  
 ու ապաւէն ճանչնալով զքեզ ինծի սուրբ  
 Աստուածածին, կ'աղաչեմ խոնարհու-  
 թեամբ որ հիմակուրնէ բարեխօս ըլլաս  
 ինծի համար, թողութիւն խնդրես մեղքե-  
 րուս, ու տաս շնորհք մը որ ասկից ետքը  
 ջանամ բոլորով սրտիւ ըլլած մեղքե-  
 րուս վրայ շղջալ, ու իմ ստեղծողիս կամ-  
 քը կատարել, որպէս զի սարգերնս ելլե-  
 լով իր առջևը՝ արժանի ըլլամ լսե-  
 լու ան բաղցր ձայնը, թէ «Նկէ՛ք իմ  
 հօրս օրհնեալ զաւակները, ժառանգեցէ՛ք  
 ձեզի համար պատրաստուած յաւիտեանս  
 կան արքայութիւնը» :



## ՏԱՍՆԵՐՈՐԿ ՕՐ

### Դժոխքի վրայ

Ա. — Ո՛վ մեղաւոր, կը տեսնան զուան սոսկալի կրակով ու ծխով լեցուն բանար, որ քեզի համար պատրաստուած է՝ եթէ մեղքէդ չդադրիս ու չզղջաս : Աղէկ մտմըտա ան կրակը՝ որուն մէջը պիտի այրիս հոգւով ու մարմնով, որով ըրեր ես քու մեղքերդ : Ան կրակը պիտի մտնայ քու բոլոր ներսի աղիքներուդ մէջ, բերնիդ՝ ոսկրներուդ ու գլխիդ մէջը, անանկ որ պիտի ըլլաս կրակ դարձած երկաթի մը պէս, ու տանջուելով սատանաներուն ձեռքը՝ ամէն դիէդ կրակ պիտի ցաթկէ : Ի՞նչպէս պիտի կենաս ան սոսկալի կրակին մէջ, որ հիմա չես կրնար դիմանալ մէկ պզտիկ ճրագի մը բուցին, ու ինտո՛ր չես մտմտար :

Բ. — Թէ որ դատապարտուիս դժոխքին, ի՞նչ պիտի ընես ան տեղը : Պիտի մտմըտաս՝ թէ քիչ մը բանով կրնայիր փրկուիլ ու չուզեցիր : Միտքդ պիտի գան

ան քարոզները, ան կրթութիւնները, ան  
 գրքերը, ու ան շնորհքները, որով Աս-  
 տուած կանչեր է զքեզ ու դուն մտիկ չես  
 ըրեր: Պիտի մտմտաս զանոնք որ քու վի-  
 ճակովդ էին, քու տարուօքդ, քու բնու-  
 թենովդ, նոյն տնէն, ու նոյն վանքէն, որ  
 փրկուեցան, ու դուն դատապարտուեցար:  
 Ասոնք մտմրտալէն ետքը պիտի կատղիս,  
 յուսահատիս, անիծես զքեզ, ու անար-  
 գես պահապան հրեշտակդ, բարեխօս սուր-  
 բերդ, զՅիսուս քու հղբայրդ, և զսուրբ  
 կոյւր քու մայրդ: Ի՛նչ սուկալի կեանք  
 պիտի ըլլայ, ու ի՛նչ զարհուրելի խոռ-  
 վութիւն դժոխքին մէջ:

Գ. — Երբոր իյնաս ան կրակին մէջը,  
 մտմրտա թէ ո՛րչափ պիտի կենաս հոն.  
 արդեօք հարի՞ւր, կամ հազա՞ր, կամ բիւ-  
 րաւո՞ր տարիներ. չէ, այլ շատ աւելի:  
 Իսկ թէ ո՛րչափ, գիտցիր որ որչափ Աս-  
 տուած՝ Աստուած է, դուն ալ միշտ և յա-  
 ւիտեան պիտի մնաս ան տեղը, ամենեւին  
 մէկ ատեն մը պիտի չունենաս հանգիստ,  
 կամ շարժիլ մը, կամ աչքդ քոցել, կամ  
 կաթիլ մը ջուր պապակդ անցընելու: Ո՛վ  
 զարհուրելի կրակ, սոսկիսլի դժոխք, ու  
 սարսափելի յաւիտենականութիւն:

Պատուի թէ որ կ'ուզես փրկութեան  
 հասնիլ, խնդրէ սուրբ Աստուածածնէն,  
 որ ազէկ իմացընէ քեզի թէ ի՛նչ է դը-  
 ժոխքը, ու երբոր մտնաս մէկ եկեղեցի  
 մը, մտածէ աս բանս. Եթէ աս եկեղեց-  
 ւոյ մէջ յաւիտեան մնալու ըլլայի, (որ  
 սուրբ ու հանգիստ տեղ է), ի՛նչ ծանր  
 նեղութիւն էր ինձի, հապա ի՛նչ պիտի  
 ըլլայ դժոխքին մէջ: Ու ըսէ՛ բոլորով  
 սրտիւ աս սուրբ Աստուածածին. «Մայր  
 Աստուծոյ, փրկել զանձինս մեր ի յաւի-  
 տենից ի հրոյն, աղաչեմք զքեզ»:

### ԱՂՕԹՔ

Գիտնալով մեղքերու շատութիւնն ու  
 ծանրութիւնը, ես ինձի կ'ընեմ իմ դա-  
 տապարտութեանս վճիռը: Եւ որովհետեւ  
 ամէն տեսակ մեղքով ու բոլոր մարմ-  
 նայն մեղանչեր եմ, արժանի եմ ամէն  
 տեսակ տանջանաց, մանաւանդ թէ մէկ  
 դժոխքը ըիջ է իմ մեղքերուս, վասն զի  
 մեծ է ապերախտութիւնս որ ըրեր եմ  
 ատեղծողիս դէմ: Հոգի տուեր է ինձի, որ  
 զինքը հանչնաս ու սիրեմ, բայց ես իմ  
 միտքս ու սիրտս տուել եմ սատանային

Կամքն ընելու: Մարմին տուեր է ինձի,  
 որ իր ծառայութեան մէջ բանեցրնելով  
 բարիք պատրաստեմ ինձի արքայութեան  
 համար. բայց ես անհոգ ըլլալով տուեր  
 եմ զիս աշխարհային բաներու. աչքս,  
 ազանջս, բերանս, ձեռքս ու այլ ամէն  
 զգայարանքներս բանեցուցեր եմ իմ ստեղծողիս  
 դէմ. ուստի ես իմ բերնովս կը  
 վկայեմ թէ արժանի եմ դժոխքին: Բայց  
 զիտեմ քու անհուն ողորմութիւնդ՝ Աստուած  
 իմ, փրկիչ իմ, կեանք իմ Յիսուս  
 Քրիստոս, նայէ՛ ողորմելի հոգւոյս վրայ,  
 որ ինկեր է քու առջևդ, ու կ'աղաչէ խոնարհութեամբ  
 քու գթութիւնդ. զուն՝  
 որ ստեղծեր ես, ձեռքովդ, փրկեր ես  
 չարչարանքովդ, պահեր ու պաշտպաներ  
 ես քու շնորհքովդ, մի՛ թողուր որ կորսուիմ,  
 այլ միջնորդութեամբ ամէնօրհնեալ  
 մօրդ դառնամ իմ մեղքէս, ու ճշմարիտ  
 ապաշխարութեամբ արժանի ըլլամ երկնից  
 արքայութեան:

---

## ՄՆՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Դատաւարտեոց համբանքին վրայ

Ա. — Աչքդ դարձո՛ւր դէպ ի վար նա-  
յէ՛ դժոխքը, ու համրէ՛ թէ ո՛րչափ դա-  
տաւարտուած մարդիկ կան ան տեղը  
Քրիստոսի աշխարհք գալէն առաջ: Թէ որ  
մտմըտանք մինակ ջրհեղեղին ատենը, այն  
բազմութեան գրեթէ ամէնը դատաւար-  
տուած են, բաց ի քանի մը հոգիէն, որ  
Նոյ նահապետին հետ տապանը մտան, կամ  
զղջացին: Ո՛ւր դնենք Սողոմայ ու Գոմո-  
րայ բնակիչները, և ուրիշ կռապաշտ ազ-  
գերը, որ կային ան ատենները: Նաև նոյն  
իսկ Հրէից ազգէն որ Աստուծոյ ժողովուրդ  
էր, ո՛րչափ հոգիք դատաւարտուած կան  
դժոխքին մէջ:

Բ. — Մտմըտա՛ ան դատաւարտուած-  
ներուն համբանքն ալ, երբոր Քրիստոս  
աշխարհքիս վրայ էր: Ո՛րչափ անզեղջ  
անհաւատներ, ո՛րչափ խոտաաիրա փիլի-  
սոփաներ, ո՛րչափ հրէաներ որ հալածե-  
ցին զՅիսուս. ո՛րչափ մարդիկ ալ որ Յի-



սուսին հետը խօսեր են, վարուեր են, ու  
աչքովնին ալ հրաշքները տեսած են: Ա-  
նոնց մէջն է Պիղատոս դատաւորը, կա-  
յիափա քահանայապետը, Հերովդէս թա-  
գաւորը ու Յուդա Յիսուսին աշակերտը,  
նաև ձախակողմեան աւագակը, որ Յիսու-  
սին քովը խաչին վրայ մեռաւ:

Գ. — Մտմբտա՛ անոնց համբանքն ալ,  
Յիսուսին գալէն ետքը դատապարտուած  
են: Ո՛րչափ մարդիկ որ Յիսուսի աւետա-  
րանին թշնամի եղան, Աստուծոյ հրաշք-  
ները չուզեցին տեսնալ, ու հալածեցին  
քրիստոնեաները: Ո՛րչափ մեծմեծ թագա-  
ւորներ, զօրապետներ, իշխաններ, փիլի-  
սոփաներ, հարտասաններ, գիտուն բա-  
նաստեղծներ, որ աշխրբքիս մէջը անուն  
ձգեցին: Ասոնցմէ ի զատ՝ ո՛րչափ ուղղա-  
փառ քրիստոնեաներ ալ կան, որ ունէին  
հշմարիտ հաւատք, լսեր էին բարոյներ,  
առեր էին Աստուծոյ շնորհքը մկրտու-  
թեամբ և այլ խորհուրդներով: Ո՛րչափ  
քահանաներ, եպիսկոպոսներ ու կրօնաւոր-  
ներ: Հիմա ալ որ ես կը մտմբտամ կտր,  
արդեօք ո՛րչափ հոգիք դժոխքը կը  
թափին: Աս սմէնք գիտնալով, կրնա՞յ  
մտքէդ անցնիլ թէ մեղաւորներուն ամէն-

ըր դատապարտուելու ըլլան, արքայութեան համար ի՞նչ կը մնայ: Գիտցիր որ մեղաւորներուն դատապարտուելէն ոչ Աստուծոյ, և ոչ արքայութեան սակաւութիւն մը կ'ըլլայ: Թէ որ կ'ուզես քիչերուն հետ փրկուիլ, նայէ՛ որ քիչ մարդու հետ փոքուիս:

Պատու: Գի՛ր քեզի մասնաւոր ջերմեանդութիւն մը, որ ընես բոլոր կենացդ մէջ ի պատիւ սուրբ Աստուածածնայ, որպէս զի ազատէ զքեզ դժոխք նրթալու վտանգներէն: Գիտցիր որ շատ մարդիկ կրնային դատապարտելոց համբանքին մէջը ըլլալ, թէ որ սուրբ Աստուածածնայ բարեխօսութիւնը իրենց չհասնէր: Ուստի ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. «Միայն որհնեալ սրբուհիդ ի կանայս... բարեխօսեալ առ Տէր վասն անձանց մերոց, զի փրկեսցէ զմեզ ի սպառնալեաց գեհենոյն»:

## ԱՂՕԹԻՔ

Ճշմարտութիւն յաւիտենական տէր իմ Արարս Քրիստոս, զուն, որ ըսիր քու անսուտ բերանովդ թէ շատ են կանչուածները. գիտեմ որ ես ալ աս սուրբ հա-

ւատքովս արքայութիւն կանչուածներուն  
 մէջն եմ, բայց չգիտեմ թէ արդեօք ար-  
 դարներուն համրանքին մէջը պիտի գրա-  
 նուի՞մ, թէ ոչ: Գիտեմ որ շատ են դժոխք  
 գացողները, ու քիչ են արքայութիւն հաս-  
 նողները, ուստի տարակուսեր եմ իմ փրկ-  
 կութեանս վրայ՝ տեսնելով իմ անհոգու-  
 թիւնս, որ չէ թէ մինակ սէր չունիմ բա-  
 րիք ընելու, այլ և անդադար մեղաց հետ  
 ըլլալով, կը սրդողցընեմ զքեզ փրկիչ իմ  
 Յիսուս, ուստի արժանի եմ որ դատա-  
 պարտելոց համրանքին մէջը գիտալ գնես:  
 Բայց գիտնալով քու անբաւ գթութիւնդ,  
 որ մեղաւորները դժոխքէն խալըսելու հա-  
 մար եկար աշխարհք, կ'աղաչեմ ըզքեզ  
 տուր ինձի քու շնորհքդ, որպէս զի  
 միջնորդութեամբ ամէնօրհնեալ մօրդ շրտ-  
 կեմ իմ վարքս, ու ճշմարիտ գղջումով  
 ըրած մեղքերուս վրայ, արժանի ըլլամ  
 սուրբերուն համրանքին մէջը գտնուիլ, ու  
 փառաւորել քու անհուն նորմութիւնդ, որ  
 ամենուն փրկութիւնը կ'ուզես:

---

## ԵՐԿՈՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Քրիստոսն շարտարեալսն վրայ

Ա. — Ո՛վ Աստուած իմ, զիս փրկելու համար ալ ի՞նչ բան կրնայիր ընել՝ որ չես ըրած: Թէ որ կը կանչես զիս ողորմութեամբդ, ես կը մեղանչեմ՝ յուսալով քու բարութեանդ: Թէ որ կ'իմացրնես ինձի քու արդարութիւնդ, կը մեղանչեմ յուսահատելով քու ողորմութենէդ: Թէ որ կը մխիթարես իմ սիրտս, կը մեղանչեմ յանդգնութեամբ: Թէ որ սրդողիս, կը մեղանչեմ արհամարհութեամբ: Կ'ըլլայ որ արցունքովս կը թրջեմ խաչելութիւնը, ու թիչ ատենէն ետքը՝ կը դառնամ իմ մեղքերովս նորէն Յիսուսին վէրքերը բանալու ի՞նչ մեծ շարութիւն է աս իմ շարութիւնս, որ ես ալ չեմ իմանար:

Բ. — Ո՛վ Աստուած իմ, արդեօք բան մնացե՞ր է, որ չես ըրած իմ փրկութեան համար: Գրե՛ր ես զիս սուրբ եկեղեցւոյ մէջը, տուեր ես ինձի լոյս՝ ճանչնալու զքեզ, տուեր ես խղճմտանք՝ մեղ-

քէ զգուշանալու համար. տուեր ես շնորհք՝  
մեղքի դէմ կենալու համար. տուեր ես  
շանազան խորհուրդներ՝ արիանալու հա-  
մար. տուեր ես բարի օրինակներ՝ սիրտ  
առնելու համար: Մեղք ըրած ատենս կըր-  
նայիր պատուհասել զիս, սակայն ողոր-  
մութեամբդ թողութիւն տուիր: Ուրիշ մե-  
ղաւորներու հետ արդարութեամբ վարուե-  
ցար. իսկ ինձի մինակ քու ողորմութիւնդ  
ցըցուցիր: Ամէն բան ըրիր ինձի մեղքէս  
դառնալու համար, ու ես անզեղջ մնացի  
իմ մեղքիս վրայ:

Գ. — Ո՛վ Աստուած իմ, հիմա ի՞նչ  
կրնամ ուզել քեզմէ իմ փրկութեանս հա-  
մար: Թէ որ սուրբ արիւնդ ուզելու ըլ-  
լամ, ամէնն ալ ինձի համար թափեցիր:  
Թէ որ հոգիդ, զայն ալ ինձի համար հօր  
Աստուծոյ ընծայեցիր: Թէ որ մարմինդ,  
ան ալ ինձի համար խաչուեցաւ, ու ան-  
դադար կը պատարագուի իմ փրկութեանս  
համար: Ուստի չգիտեմ՝ ի՞նչ բան ուզեմ  
որ իս մեղքէն դադրեցընէ: Չայն ամէն բա-  
րիքը որ ըրեր ես իմ փրկութեանս հա-  
մար, ճանչնալով՝ նորէն կը մեղանչեմ.  
ու անանկ կու գայ ինձի, իբր թէ շնորհքդ  
ինձմէ պակաս ըլլալուն համար մեղքի մէջ


կ' իշնամ: Չեմ հասկընար իմ խենդութիւնս,  
որ պիտի դատապարտուիմ իմ չարու-  
թեանս համար:

Պատոյ: Միջնորդ բռնելով սուրբ Աստուածածինը՝ շնորհակալ եղիր աստուածային բարերարութեանցը որ քեզի ըրեր է, ու թողութիւն խնդրէ ապերախտութեան մեղքերուդ համար: Աղաչէ զինքը ու ըսէ ջերմեռանդ սրտով. « Ի բարեխօսութիւն փութացի՛ր մեզ սուրբ Աստուածածին՝ առ ի փրկել զժողովուրդս ի մեղաց և յապականութենէ »:

### ԱՂՕԹԻՔ

Ո՛վ տիրուհի իմ սուրբ Աստուածածին, մտմբտալով Աստուծոյ ինծի ըրած բարերարութիւնները ու իմ ապերախտութիւններս կը դողամ ու կը սահմբռկիմ, թէ ի՛նչ պատասխան պիտի տամ իմ ստեղծողիս՝ երբոր երեսս զարնէ ըրած չարութիւններս իր անբաւ բարութեանը դէմ: Գիտեմ ու կը ճանչնամ թէ Աստուած՝ իմ փրկութեանս համար չէ թողուցեր մէկ ճար մը, որ ըրած չըլլայ զիս արքայութիւն տանելու. բայց ես իմ կու-

բութեամբս , իմ անհոգութեամբս , իմ  
 չարութեամբս ամէնն ալ բանեցուցեր եմ  
 վինքը սրդողցընելու ու իմ հոգիս կորսըն-  
 ցընելու . ուստի հիմա ճանչնալով իմ խեն-  
 դութիւնս ու ամբշնալով ըրածներուս վը-  
 րայ , կը դիմեմ խոնարհութեամբ քու գը-  
 թութեանդ սուրբ Աստուածածին : Դուն որ  
 մեղաւորներուն համար եղար մայր Աս-  
 տուծոյ , ցըցո՛ւր ինծի քու մայրութիւնդ՝  
 աղաչելով Յիսուս փրկիչը , որ իմ փրկու-  
 թեանս համար եկաւ աշխարհք , քարոզեց ,  
 չարչարեցաւ , խաչեցաւ , մեռաւ ու յա-  
 բուցիւն առաւ , որ զիս ալ շնորհքով ող-  
 ջընցընէ . քու միջնորդութեամբդ տայ  
 ինծի շնորհք , որպէս զի դառնամ իմ մեղ-  
 քերէս , ցաւիմ ու զղջամ ամէն չարու-  
 թեանս վրայ , ու վարքս շտկելով ծառա-  
 յեմ Աստուծոյ : Մի՛ թողուր զիս մայր  
 ողորմութեան , որ պաղիմ ու հեռանամ  
 քու ջերմեռանդութենէդ . քանի որ սէլդ  
 սրտիս մէջը ըլլայ , գիտեմ որ պաշտպա-  
 նութիւնդ ալ վրայէս պակաս չըլլար , ու  
 քու բարեխօսութեամբդ արժանի ալ կ'ը-  
 լամ արքայութեան :



## ԵՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԻ ՕՐ

Գայրակողոզքեան մեղքին վրայ

Ա. — Գայթակղութեան մեղքը շատ մեծ անիրաւութիւն մըն է: Մտմբտա՛ թէ մէկ հոգի մը ի՛նչ գին նստեր է Յիսուսի Քրիստոսի: Գիտես թէ ինչ նեղութեամբ, որպիսի՛ նախատինքով, չարչարանքով ու խաչով ծախու է առեր, ինչուան բոլոր արիւնք թափելով ու իր կեանքը տալով: Դուն որ գայթակղութեան մեղքով կ'ուզես գողնալ իրմէ ան հոգին, Յիսուսին անոր համար քաշած չարչարանքը անպիտան կ'ընես: Ի՛նչ մեծ ցաւ կու տաս Յիսուսի սրտին, ու կ'ըլլաս նման սատանայի, որ միշտ թշնամի է եղեր ու ըսպաննող հոգիներուն, անոր պէս դուն ալ մարդասպան կը սեպուիս քու գէշ խօսքերովդ, գործքերովդ, նայելովդ ու անկարգ վարքովդ, որ անմեղ հոգիները կը մատնես մահուան:

Բ. — Գայթակղութեան մեղքը խորունկ փոս մըն է անթիւ մեղքերու: Ան մեղքը՝



որ մէկին պատճառ կ'ըլլաս ընելու, քուկդ  
կը սեպուի, ու ան առջի մեղքէն ետքը՝  
ի՛նչ մեղք ալ որ ընելու ըլլայ, որով-  
հետե քու գայթակղութեան մեղքէդ շար-  
ժած ու ըրած կ'ըլլայ, ամէնն ալ  
քուկդ կը սեպուի: Ասկից զատ՝ մե-  
ղանչե՞ց մէկը քու չար օրինակովդ,  
ինքն ալ պատճառ կ'ըլլայ ուրիշի մե-  
ղաց. և ասանկ՝ ան մեղքերն որ կ'ըլլան,  
քուկդ կը սեպուին, ինչու որ դուն ես  
առջի պատճառը, ու քեզմէ սորված՝ սկը-  
սան մեղանչել:

Գ. — Գայթակղութեան մեղքը ծանր  
անարգանք է Աստուծոյ: Աս մեղքով Աս-  
տուծոյ դէմ կը կռուիս, ու սատանային  
հետ մէկտեղ ըլլալով՝ քու կողմանէդ կը  
ջանաս պակսեցընել Աստուծոյ փառքն ու  
պատիւը: Անպարկեշտ նայելովդ, խըն-  
տալովդ՝ խօսելովդ եկեղեցւոյ մէջ՝ ան-  
ւրատիւ կ'ընես Աստուծոյ տունը: Կը յա-  
փրշտակես Յիսուսին ձեռքէն իր անգին  
արիւնով ծախու առնուած հոգիները, ու  
կը մատնես սատանային ձեռքը, զրկելով  
զանոնք երկնից արքայութենէն, ասանկ  
որ՝ արքայութիւնն սլ կը զրկես իր յա-  
ւիտենական փառքէն՝ պակսեցընելով ան-

կից Աստուծոյ օրհնարանիչները, որ փրկուեցով սուրբերուն հետ պիտի օրհնէին զԱստուած յաւիտեանս յաւիտենից: Թող զայն ալ՝ որ պատճառ ըլլալով ուրիշի դատապարտութեան, կը շատցընես դժոխքին միջի եղածները, որ պիտի անիծեն ու հայհոյեն մէկգմէկ: Մտմբտա՛ հիմա՛ թէ որչափ պարտք պիտի ունենաս Աստուծոյ այսչափ տարուան զայթակողութեան մեղքերուդ համար: Եւ գիտցի՛ր որ Աստուած իր բարութեան համար կ'ընդունի քու ապաշխարութիւնդ ու հերիք կը սեպէ, թէ որ ասկից ետքը բարի օրինակովդ կամ խրատով վաստրկիս իրեն մէկ հոգի մը փոխանակ այնչափ հոգիներուն, որոնց կորսուելու պատճառ ես եղեր. ուստի ջանա՛ որ քիչ մը բանով հաշտուիս Աստուծոյ հետ:

Պատոյ: 'Կայէ՛ որ մասնաւոր պարկեշտութիւն մը ունենաս եկեղեցւոյ մէջ, ճամբան քալելու ատենդ, ու կենցաղավարութեանդ մէջը. որպէս զի ուրիշի տուած զայթակողութիւններուդ դեղ մը ըլլայ. ու ըսէ՛ առ Աստուած բոլորով սրբտիւ՛ միջնորդ բռնելու՛ քեզի սուրբ Աստուածածինը. «Յամենայն ժամ աղաչանք

իմ այս են, ի մեղաց իմոց սուրբ արամ  
զիս Տէր, և յօտարէն պահեամ զծառայս  
քո» :

## ԱՂՕԹՔ

Վայ ինձի, որ իմ մեղքերս հերիք չսե-  
պելով, ուրիշի ալ պատճառ եղեր եմ չար  
օրինակներովս մեղքի մէջ ձգելու: Գոր-  
ծակից եմ եղեր սատանայի՝ Յիսուսին դէմ  
կռուելու համար. ու իր սուրբ արիւնով  
ծախու առնուած հոգիները զրկեր եմ ար-  
քայութենէն, ու դժոխքի որդի եմ ըրեր:  
Չգիտեմ՝ թէ ի՞նչ բանով կրնամ դեղ ընել  
աս իմ ըրած քնասներուս, բայց եթէ իյ-  
նալ քու առջևդ սուրբ Աստուածածին,  
ու աղաչել քու բարեխօսութիւնդ: Դուն  
որ մայր ես ողորմութեան, ողորմէ՛ ինձի  
անարժան մեղաւորիս, երևցրնելով զօրա-  
ւոր միջնորդութիւնդ՝ որպէս զի խալըսիմ  
ոչ թէ մինակ իմ մեղքերէս, որ ես ինձի  
զէն տուեր եմ, այլ մանաւանդ ան ծանր  
մեղքերէն, որով ուրիշի հոգւոյն պատճառ  
եմ եղեր կորսուելու: Կ'աղաչեմ զքեզ  
մայր Աստուծոյ. դուն որ ապաւէն ես մե-  
ղաւորաց, մխիթար վշտացելոց, պաշտ-

պանէ՛ ու մխիթարէ՛ իմ վշտացեալ հոգիս, որ ճշմարիտ զղջումով կը ցաւիմ ըրածներուս վրայ, ու կ'առաջադրեմ Յիսուսին շնորհքովք, որ ասկից ետքը բարի օրինակ տալով ուրիշի, ջանամ վատրկիլ գոնէ մէկ հոգի մը, որ դեղ ըլլայ անցած գացած մեղքերուս, ու ասով քու մայրութիւնդ փառաւորուի իմ վրաս:

## ԶՈՐԵՒՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Մարդկային նկատման վրայ

Ա. — Մտմըտա՛ թէ ի՛նչ է պատճառը՝ որ կ'ուզես վարքդ շտկել, ու չես կրնար: Թէ որ աղէկ մտմըտալու ըլլաս, ուրիշ բան չէ, բայց եթէ մարդկային նրկատմո՛ւ (սայդը), որ չթողուր քեզի ձեռք գալնել: Թէ որ չերթամ կ'ըսես ան տունը կամ ան տեղը, պիտի զբուցեն մարդիկ թէ խոստովանահայրը արգիլել է որ չերթայ: Թէ որ հեռանամ իմ գէշ ընկերներէս, պիտի ըսեն որ ճգնաւոր կ'ուզէ ըլլալ: Թէ որ դադրիմ ծաղրածութիւն ընելէն, պիտի ըսեն թէ տաքարիւն

մարդ չէ: Եթէ պարկեշտ նայուածք ունենամ՝ ու փախչիմ խաղալէն, խնտալէն ու զքօսանք երթալէն, պիտի խնտան վըրաս ու ըսեն՝ թէ խղճահար մարդ մըն է: Ինչ մեծ խենդութիւն է դատապարտուիլը մարդկային նկատման համար:

Բ. — Փափաք կ'երեցընես սուրբ ըլլալու, սակայն ամենեին ետեւն չես իյնար: Ինչ է պատճառը, եթէ ոչ մարդկային նկատմունք: Թէ որ թողում կ'ըսես մարդկանց հետ վարուիլը, զքօսանք երթալը, պիտի ըսեն ինծի համար՝ թէ լեռնցի է ու մարդկութիւն չունի: Թէ որ զարդարանքներս ու աղուոր հագուստս մէկդի ձգեմ, պիտի ըսեն թէ գեղացի մըն է, աղուոր բաներէն չի հասկընար: Եթէ տեսնան որ սուրբ տեղուանք կը պտըտիմ, կամ ժամերը, կամ հիւանդանոցները ու ջերմեռանդութեան հետ կ'ըլլամ, պիտի ըսեն թէ կեղծաւոր մարդ մի է: Չե՞ս գիտեր որ ասանկ սուտ մտմբտուքներով կը կորսնցընես սրբութեան փառքը, թէ հոս և թէ՛ անդին արքայութեան մէջ:

Գ. — Թէ որ քեզի ամօթ կը սեպես Յիսուսին խաչելութիւնը, Յիսուս սլ քեզ պիտի ամբշցընէ հրեշտակներուն առջևը,

ինչպէս որ կը զբուցէ ինքը աւետարանին մէջը (Ղուկ. Թ. 26): Դատաստանին օրը երբոր ըսելու ըլլաս իրեն, թէ Տէ՛ր՝ չե՞ս ճանչնար զիս որ բրիստոնեայ եմ, Յիսուս պիտի զբուցէ քեզի՝ թէ չեմ ճանչնար. ինչու որ ամբողջար իմ նշանս քու վրադ կրելու, շուգեցիր ջերմեռանդ երևնալ, բարի գործեր ընել, երկիրդած ըլլալ. ուստի չեմ ճանչնար զքեզ՝ թէ իմ աշակերտս ես: Դեմ՝ քու չար ընկերներուդ հետ սատանային քովը, որ զքեզ կը ճանչնայ. վասն զի ես քեզ չեմ ճանչնար:

Պատու: Մը որ տեսնես սուրբ Աստուածածնայ պատկեր մը, ըրէ՛ իրեն քու յարգութիւնդ առանց ամբողջալու. գիտցի՛ր որ մինակ անոր բարեխօսութեամբը կըրնաս պարզերես ելլել Յիսուսին առջև, ու ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. «Սրբունի Մարիամ մայր Աստուծոյ, բարեխօսեա՛ վասն մեր մեղաւորաց»:

### ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս՝ կ'ամբողջամ ու կր պատկատիմ, մտմբտալով իմ խենդութիւնս, որ մոռնալով քու մեծու-

թիւնդ՝ ծառայեր եմ աշխարհքիս ունայ-  
 նութեան : Աւելի ուզեր եմ մարդկանց  
 հաճոյ ըլլալ՝ քան թէ քեզի փրկիչ իմ  
 Յիսուս : Վախցեր եմ մարդկանց խօսքե-  
 րէն , ու չեմ վախցեր քու արդարու-  
 թենէդ : Անհոգ եմ եղեր պատուիրանքդ  
 պահելու , աշխարհքիս գէշութեան հետեւելու  
 համար : Ամօթ սեպեր եմ ինծի քու խաչդ ,  
 ու փախեր եմ անկից առանց մտմբտա-  
 լու՝ թէ սուրբ խաչը պիտի ըլլայ ինծի  
 պարծանք արքայութեան մէջ : Ամբոջեր  
 եմ բարի քրիստոնեայ երևնալու , ու չեմ  
 ամբոջեր սատանային ծառայելու , ու մեղ-  
 քերով իմ հոգիս սևեղնելու : Վայ ինծի՝  
 երբոր ելլեմ քու առջևդ , երբոր մեղքերս  
 երեսս տաս , երբոր ցուցնես ինծի քուկին  
 բարկութիւնդ ու վռնտես զիս քու տե-  
 սութենէդ : Կը ցաւիմ որ ինչուան հիմա  
 ասանկ գէշ վարք ունենալով՝ անարգեր  
 եմ քրիստոնէութեան անունս , ու նախա-  
 տինք եղեր եմ իմ փրկչիս . ուստի վախ-  
 նալով ու ամբոջնալով ըրածներէս՝ կը դի-  
 մեմ քեզի սուրբ Աստուածածին . գիտեմ  
 որ մինակ քու բարեխօսութնամբդ կրնամ  
 շտկել իմ վարքս , կրնամ պարզերես ել-  
 լել : Յիսուսին առջևը . անոր համար կ'ա-

դաչեմ զքեզ մայր ողորմութեան՝ խնամէ՛  
 զիս մայրական սիրովդ, վառէ՛ իմ սիրտս  
 Յիսուսին սէրը, որ ասկից ետքը քու  
 միջնորդութեամբդ ըլլամ հշմարիտ ծառայ  
 Աստուծոյ, ու իմ բոլոր կեանքս նուիրեմ  
 իր սիրոյն, որ արժանի է ամէն ծառայ  
 յութեան:

## Հ Ն Պ Ե Տ Ա Ս Ա Ն Ե Ր Ո Ր Պ Օ Ր

Արքայութեան վրայ

Ա. — Մտմբտա՛ թէ ի՞նչ բան կը սիրես  
 աշխըրքիս մէջ: Թէ որ ազատութիւն ու  
 համարձակութիւն կ'ուզես, գիտցիր որ  
 եթէ արքայութիւն երթաս կրնաս ուզածիդ  
 պէս համարձակ քալել օդոյն մէջը, դէպ  
 երկինքը երթալ՝ արևուն, լուսընկային  
 ու աստղերուն քովը: Կրնաս քիչ ատենի  
 մէջ երկինքէն վար իջնել, ու աշխարքէս  
 երկինք ելլել: Կրնաս համարձակ առանց  
 արգելքի մտնալ ելլել ո՛ւր որ ուզես:  
 Թէ որ կը փափաքիս անուշ ձայներլսել,  
 գնա՛ արքայութիւն, ուր պիտի լսես հրեշ-  
 տակներուն ու սուրբերուն անուշ երգերը:



Արքայութեան մէկ նուագարանին ձայնը  
քիչ մը ատեն լսելով սուրբ Պրանչիակոս,  
բոլորովին յափշտակուելով մոռցաւ զինքը  
ու իր ամէն զգայութիւնը:

Բ. — Թէ որ կը փափաքիս ազուոր  
ըլլալու, գիտցի՛ր որ եթէ արքայութիւն եր-  
թաս՝ աչուրներդ պիտի նմանին մէյ-  
մէկ աստղերու. բոլոր երեսդ պիտի փայ-  
լի արեգական պէս պայծառ և գեղեցիկ.  
ձեռուրներդ պիտի զարդարուին աննման  
զարդերով, ու բովանդակ մարմինդ փառա-  
ւոր և անպատմելի լուսով պիտի պայծա-  
ռանայ: Թէ որ կ'ուզես իմաստուն ու խե-  
լացի ըլլալ, գնա՛ արքայութիւն, ուր մէ-  
կէն ի մէկ կ'ըլլաս իմաստուն քան զՍո-  
դոմոն, խեղացի քան զամէն փիլիսոփա-  
ները, առանց աշխատանքի կ'ունենաս ա-  
մենէն բարակ ու խորունկ գիտութիւննե-  
րը, ու անոնցմով զմայլելով՝ ամենեւին  
չես ձանձրանար:

Գ. — Թէ որ կը փափաքիս վայլել  
աշխարհիս մէջի եղած բաներուն ազուո-  
րութիւնը, գիտցի՛ր որ քան զանոնք շատ  
ազուոր է իրենց ստեղծողը, զոր երես առ  
երես պիտի տեսնաս արքայութեան մէջը,  
ու մօտանց պիտի զմայլիս ու ըլլաս ե-

բանելի: Թո՛ղ այն ուրախութիւններն ալ որ պիտի ունենաս՝ տեսնալով հրեշտակներուն քաղմութիւնը, սուրբ նահապետները, առաքեալները, մարտիրոսները, քու պաշտպան սուրբերդ, և մանաւանդ ըզսուրբն սրբոց Յիսուս փրկիչն, ու սուրբ կոյս Աստուածածինը: Թէ որ կը փափաքիս մեծութիւն ու ապրանք վաստրկելու, գնա՛ արքայութիւն՝ ուր կը ժառանգես զԱստուած, որ տէրն է ամէն մեծութեան ու աշխրրքիս հարստութեան: Ինքը բոլոր քուկդ պիտի ըլլայ, ու բնաւ մէկը չի կըրնար զանի քեզմէ գողնալ, ու դուն ալ չես կրնար զինքը կորսնցընել. ուստի պիտի վայլես զինքը յաւիտեանս յաւիտենից: Խենդ ես, թէ որ մէկ ոչինչ բանի մը համար կորսնցընես արքայութեան ասանկ մեծ բարիքը:

Պատու հասրո՛ւէ՛ ունեցածներուդ մէջ, թէ որ անասնկ բան մը կը գտնուի, որ անվայել է քեզի կամ պարկեշտութեան, դուրս ձգէ ու հեռացո՛ւր քեզմէ սուրբ Աստուածածնայ սիրոյն համար: Գիտցի՛ր որ շատ մեղաւորներ առ բանովս արժանի եղեր են արքայութեան, ու ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. « Աստուածածին ապաւէն

մեր և յոյս, բարեխօսեալ առ որդիդ քո միածին, զի փրկեսցէ զմեզ ի հրոյն տանջանաց, և պարգևեսցէ մեզ զերկնից արքայութիւն» :

### ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ, թէ որ աշխրրբիս մէջ իմ ողորմելի մարմնոյս համար այսչափ բարիք ստեղծեր ես, հապա ո՛րչափ աւելի ըրած պիտի ըլլաս հոգւոյս համար արքայութեան մէջ. բայց ես կուրցած ըլլալով իմ մեղքերովս՝ անհոգ եմ, չեմ մտմբտար ու չեմ փափարքիր յաւիտենական կենացը, որ զիս երանելի պիտի ընէ: Կը հաւատամ, Աստուած իմ, թէ ամէն բարիքներէն ի զատ որ պատրաստեր ես ինծի արքայութեան մէջ, ամենէն մեծը ու փափարքելին ան է, որ զքեզ պիտի տեսնամ, զքեզ ժառանգեմ, քեզմով մխիթարուիմ, ու քեզմով պիտի զմայլիմ յաւիտեանս յաւիտենից: Վայ ինծի որ չընձանչնալով այսպիսի մեծ բարիքը՝ ինչուան հիմա իմ սիրտս աշխրրբիս ունայնութեան տուեր եմ, ու մոռնալով յաւիտենական կեանքը, անցաւոր բաներու հետ

եղեր եմ : Ո՛վ Աստուած իմ Յիսուս, դու  
 որ ճանապարհ, ճշմարտութիւն ու կեանք  
 ես, լուսաւորէ՛ իմ խաւարեալ միտքս, որ  
 ճանչնամ ինձի համար պատրաստուած  
 բարիքը, վառէ՛ իմ սիրտս արքայութեան  
 սիրովը, որպէս զի աշխրբիս բաները ին-  
 ձի գարշելի ըլլան, ու ես ալ արքայու-  
 թեան փափաքովն զքեզ սիրեմ, զքեզ  
 պաշտեմ ու քու սիրովդ տոչորուիմ :  
 Կը խնդրեմ քեզմէ ալ մայր Աստուծոյ,  
 որ ըլլաս ինձի բարեխօս՝ քաղցր զաւկիդ  
 առջևը, ու քու միջնորդութեամբդ իմ  
 վարքս շտկելով, արժանի ըլլամ արքա-  
 յութեան մէջ սուրբերուն կարգը մտնալու,  
 ու հոն փառաւորելու քու ինձի ըրած  
 պաշտպանութիւնդ ու մայրական զթու-  
 թիւնդ :

## ՎՆՃՏԱՍԱՆԵՐՈՐԴ ՕՐ

Արքայուհի Եկատերինայի օր

Ա. — Արքայութիւն երթալու՝ մինակ  
 երկու ճամբայ կայ. այսինքն անմեղու-  
 թիւն, ու ապաշխարութիւն : Անմեղու-

Թեանս համար կրնամ ըսել թէ կորսնցուցեր եմ նախ քան զճանչնալս. այսինքն՝ տաանց զհտնալու՝ թէ ինչ ազնիւ բան է անմեղութիւնը, առանց ցաւելու և լալու անոր կորսուելուն վրայ: Ո՛վ գիտէ, որ չէ թէ մինակ իմ անմեղութիւնս կորսընցուցեր եմ, այլ և ուրիշի անմեղութիւնն ալ կորսնցնելու պատճառ եմ եղեր: Մեղք այն ազնիւ անմեղութեան, որ ասանկ շուտով ու քիչ մը բանով կորսուեր է, ու կարելի ալ չէ նորէն վաստրկուելու:

Բ. – Կրնաս ըսել թէ անմեղութիւնս թէպէտ կորսընցուցի, բայց յուսամ որ մեղացս վրայ ապաշխարեցի: Սակայն ո՛վ գիտէ թէ ինչպէս ապաշխարեր ես. չգիտեմ թէ արդեօք պէտք եղածին պէս խոտովանե՞ր ես մեղքերդ՝ թէ չէ. արդեօք այն ապաշխարանքները, որ դրուած էին մեղքերուդ համար, սիրով ընդունե՞ր ու կատարե՞ր ես, թէ ծանր ու անտանելի երկցեր են քեզի: Ճգնութիւն ընելու տեղը, դուն քեզ ժողովելու, պահք ու ծոմ պահելու տեղ, տուե՞ր ես զքեզ հանգստեան, ու քու կամքդ կատարելու:

Գ. – Կ'ուզեմ արքայութիւն երթալ, բայց թէ ինչ ճամբով՝ չեմ գիտեր: Պէտք

է երկու ճամբուն մէկովը երթալ, կամ  
անմեղութեամբ, և կամ ասպաշխարու-  
թեամբ: Անմեղութեամբ չեմ կրնար եր-  
թալ, ինչու որ կորսընցուցեր եմ. իսկ աս-  
պաշխարութեամբ չեմ ուզեր, վասն զի  
դժար կու գայ ինձի. հասպա ինչպէս պի-  
տի հասնիմ փրկութեան: Աւրեմն պէտք  
է որ առաջադրեմ այսպէս: Թէ որ ին-  
չուան հիմա չեմ ըրած ասպաշխարութիւն,  
գոնէ հիմա ընեմ: Մտնամ արքայութեան  
ճամբան՝ ըանի որ ժամանակ ունիմ, ո՛վ  
գիտէ թէ ո՛րչափ պիտի ապրիմ: Կարելի  
է որ քիչ մնացեր է իմ կեանքս, ու աս  
քիչ ատենին մէջը քիչ ասպաշխարութեամբ  
ալ կրնամ վաստըկիլ արքայութիւնը. հա-  
սպա ինչու չեմ ասպաշխարեր:

Պտուղ: Ով որ կորսնցընէ սուրբ Աս-  
տուածածնայ ջերմեռանդութիւնը, կէ կոր-  
սընցընէ արքայութեան ճամբան. ուստի՝  
թէ որ պաղեր ես սուրբ Աստուածածնայ  
ջերմեռանդութենէն, ջանա՛ որ նորէն վա-  
ռես գըւզ իր սիրովը, որպէս զի փրկու-  
թեան հասնիս, ու ըսէ՛ իրեն բոլորով  
սրտիւ. «Չգեմ՝ զիս զհետ քո, ի հոտ իւ-  
ղոց քոց ընթացուք». և թէ «Չքեզ դուռն  
երկնից և ճանապարհ արքայութեան, բար-

ձող անիծից և սրովնէ հողեզէն մեծացու-  
ցանեմք» :

### ԱՂՕԹԻՔ

Ո՛վ ամէնօրհնեալ կոյս տիրուհի սուրբ  
Աստուածածին, կ'իյնամ խոնարհութեամբ  
քու ոտքդ, ու ապաւինելով մայրական  
գթութեանդ, կ'աղաչեմ զքեզ մայր ողոր-  
մութեան. կորսնցուցեր եմ արքայութեան  
ճամբան, ու չգիտեմ ի՞նչ ընելիքս. չու-  
նիմ մկրտութեան անմեղութիւնը, որ իմ  
մեղքերովս կորսուեր է. չունիմ հիմա ալ  
հոգի ապաշխարութեան, ինչու որ մեղ-  
քով սիրտս քարացեր է: Ի՞նչ որ մայր  
գթած ես, կրնաս կակղցընել իմ սիրտս.  
կրնաս նորոգել իմ հոգիս. կրնաս դար-  
ձընել զիս արքայութեան ճամբան. կըր-  
նաս քու միջնորդութեամբդ փրկել իմ հո-  
գիս: Գիտեմ մայր ողորմութեան՝ որ քեզի  
ջերմեռանդ եղողներուն պաշտպանն ես,  
ու անկարելի է անոնց դատապարտութիւ-  
նը, որոնք քու մայրական խնամքիդ տակն  
են. ուստի կ'աղաչեմ զքեզ մայր Աստու-  
ծոյ՝ զիս ալ ընդունէ՛ քեզի ծառայ մըշ-  
տընջենաւոր: Տո՛ւր ինձի շնորհք հաստա-

Բ. — Սուրբ Աստուածածինն մեր մայրն ըլլալով, իրեն ջերմեռանդութիւն ընելը շատ անուշ բան է: Իմ մայրս սուրբ Աստուածածինն է, կ'ըսէր մէկ սուրբ կրօնաւոր մը. իսկ մէկալ բնական մայրն որ ունիմ, իմին կաթմայրս է: Ինչ անուշ բան է ըսելը, թէ Յիսուսին մայրը՝ իմ մայրս է. և թէ իմ մայրս՝ Յիսուսին մայրն է. երկուքս ալ մէկ մօր զաւակ ենք: Ուստի սուրբ Աստուածածինը միշտ հետերնիս է իր շնորհքներով ու իր մայրական սիրովը. չէ թէ մինակ կը լսէ մեզի, այլ և կը խօսի ու կը շարժէ մեր սիրտը հոգեւոր բաներով, ու աչքերնիս կը լեցնէ անուշ արցունքով:

Գ. — Սուրբ Աստուածածինն ըլլալով մայր ու բարեխօս մեղաւորաց, իր ջերմեռանդութիւնը շատ փափաքելի բան է: Մեղաւորները թէպէտ իրենց մեղքովը կը ի աչեն զՅիսուս, սակայն սուրբ Աստուածածինը չի թողուր զանոնք ձեռքէ, իր սէրը կը շարժէ որ ջանայ զանոնք նորէն հաշտեցընել Յիսուսի հետ. իր մայրական գութը չի թողուր որ տեսնէ երկու եղբարքը մէկմէկու հետ թշնամի. ճար կ'ուզէ ընել որ Յիսուս մեղաւորին հետ հաշտ



Բ. — Սուրբ Աստուածածին մեր մայրն ըլլալով, իրեն ջերմեռանդութիւն ընելը շատ անուշ բան է: Իմ մայրս սուրբ Աստուածածինն է, կ'ըսէր մէկ սուրբ կրօնաւոր մը. իսկ մէկալ բնական մայրն որ ունիմ, իմին կաթմայրս է: Ինչ անուշ բան է ըսելը, թէ Յիսուսին մայրը՝ իմ մայրս է, և թէ իմ մայրս՝ Յիսուսին մայրն է. երկուքս ալ մէկ մօր զաւակ ենք: Ուստի սուրբ Աստուածածինը միշտ հետերնիս է իր շնորհքներով ու իր մայրական սիրովը. չէ թէ մինակ կը լսէ մեզի, այլ և կը խօսի ու կը շարժէ մեր սիրտը հոգեւոր բաներով, ու աչքերնիս կը լեցնէ անուշ արցունքով:

Գ. — Սուրբ Աստուածածինն ըլլալով մայր ու բարեխօս մեղաւորաց, իր ջերմեռանդութիւնը շատ փափաքելի բան է: Մեղաւորները թէպէտ իրենց մեղքովը կը ի աչեն զՅիսուս, սակայն սուրբ Աստուածածինը չի թողուր զանոնք ձեռքէ, իր սէրը կը շարժէ որ ջանայ զանոնք նորէն հաշտեցնել Յիսուսի հետ. իր մայրական գութը չի թողուր որ տեսնէ երկու եղբարքը մէկմէկու հետ թշնամի. ճար կ'ուզէ ընել որ Յիսուս մեղաւորին հետ հաշտ

ըլլայ: Թէ որ մեղաւոր ես, կրնաս սուրբ Աստուածածնայ հաճոյական բան մը ընել, եթէ իյնալով իրեն ոտքը՝ յայտնես քու մեղքդ, որով սրղողցուցեր ես զՅիսուս. յաճնելով զքեզ իր զթուխեանը ու զղջալով ըրածիդ վրայ: Ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. «Մունր խոնարհեցո՛ առ իմ հաշտութիւն՝ ծնօ՛ղդ Աստուծոյ... ձե՛ռն տուր անկելոյս՝ տաճար երկնային»:

Պատու: Մի կարծեր որ աղէկ ջերմեռանդ ես սուրբ Աստուածածնայ, թէ որ մեղքիդ մէջն անդարձ կեցած ես: Չանա՛ւամէն օր ըսել Աստուածածնայ վարդարանը, ու նայէ՛ որ ուրիշն ալ յորդորես ըսելու. խնդրելով սուրբ Աստուածածնէն. «Յոյս մեր և ապաւէն մայր Տեառն և կոյս սուրբ... բարեխօսեա՛ աւ Տէր վասն մերոյ փրկութեան »:

## ԱՂՕԹԻՔ

Ո՛վ տիրամայր կոյս սուրբ Աստուածածին, դժխոյ երկնից և թագունի հրեշտակաց, կ'ուրախանամ մեծութեանդ վրայ որ ասանկ անգին շնորհքներու ես հասեր. կը ցնծամ փառացդ վրայ՝ որ ասանկ ան-

հուն երանութեան ես հասեր: Գիտեմ մայր  
 Աստուծոյ՝ որ ամէն բանի կարող ես, ու  
 սնով կ'երեցրնես քու մեծութիւնդ ու  
 փառքդ, ուստի կ'աղաչեմ զքեզ ցըցո՛ւր  
 քու զթութիւնդ՝ ողորմելով ինձ մեղաւո-  
 րիս. երեցո՛ւր քու քաղցրութիւնդ՝ անուշ-  
 ցընելով իմ սրտիս լեղութիւնը, ցըցուր  
 քու զօրաւոր պաշտպանութիւնդ իմ յու-  
 սահատ կենացս վրայ, որ շատ պարտա-  
 կան եմ Աստուծոյ. երեցո՛ւր քու աստուա-  
 ծային ընտանութիւնդ՝ մօտեցընելով իմ  
 հոգիս առ Աստուած. ցըցո՛ւր քու պայ-  
 ծառութիւնդ՝ լուսաւորելով իմ խաւարած  
 միտքս. երեցո՛ւր քու ցնծութիւնդ՝ մխի-  
 թարելով իմ սգաւոր սիրտս: Հերիք է ին-  
 ծի մէկ անուշ սիրով նայուածքդ, որ զիս  
 մէկէն ողջընցընէ, հերիք է որ հեղ մը  
 ինծի համար ըսես Յիսուսին, թէ Տէր  
 դուն ողորմէ՛ աս խեղճ մեղաւորին, գի-  
 տե՛մ անտարակոյս որ պիտի ըսէ քեզի,  
 թէ «Եղիցի՛ քեզ որպէս և կամիս»: Թէ  
 որ մէյ մը քու մայրական խնամքիդ տա-  
 կը իյնամ, մէկէն կ'ըօրնտնամ, մէկէն կը  
 լուսացուիմ, մէկէն կը սրբութիմ, մէկէն սի-  
 ըելի կ'ըլլամ Աստուծոյ, ու արժանի երկ-  
 նից արքայութեան: Կ'աղաչեմ մայր Աս-

տուժոյ, փառաւորէ՛ քու անունդ իմ վրաս,  
որպէս զի իմ հոգւոյս փրկութեամբը մեծ-  
նայ ու քարոզուի մայրական գթութիւնդ.  
որ մեղաւորներուն վրայ կ'երևնայ:

## ՈՒԹԵՒՏԱՍՆԵՐՈՐԴ ՕՐ

Աստուծոյ ներկայութեան վրայ

Ա. — Գիտես թէ որո՛ւն քովն ես հի-  
մա: Աստուծոյ հետն ես: Քաշելու ատենդ,  
կարդալու ատենդ, պառկելու ելլելու ա-  
տենդ, խօսելու և ուտելու ատենդ գիտես  
որո՛ւն հետն ես: Աստուծոյ հետ ես: Հա-  
պա երբոր մեղանչելու ըլլաս, գիտես  
որո՛ւն հետն ես: Աստուծոյ հետ ես: Աս-  
տուած քու առջևդ է, քու քովդ է, չորս  
դիդ է. . . տեսնայ քու ամէն գործքդ, կը  
լսէ ամէն խօսքդ, կը քննէ ամէն փա-  
փաքդ, կը չափէ ամէն մտմըտուքդ. վրադ  
կը նայի գիշեր ցորեկ, թէ՛ մինաւորիկ ես  
եղեր, և թէ ուրիշի հետ. ամէն տեղ ու ա-  
մէն ատեն: Ուստի մի ըսեր ամենեին, թէ  
կընամ մեղանչել առանց ամբշնալու, ին-  
չու որ զիս մարդ չի տեսնար: Գիտցի՛ր որ  
Աստուած քեզ միշտ կը տեսնայ:

Բ. — Ի՛նչ մեծ յանդգնութիւն ու նախատինք է մեղանչել Աստուծոյ առջև, որ ամենևին սրբութիւն է ու ս.մենակարող: Ո՛րչափ ծանր բան է մեղանչելը անոր աչքին առջև, որ է քու փրկիչը, քու հայրդ, քու տէրդ, ու քու դատաւորդ: Կ'ամբընաս մեղանչել մարդու մը առջև, ու չես ամբընար Աստուծոյ առջև: Գիտես որ բոլոր մեղքերդ գրուած է իր մտքին մէջ, կը կարչայ, կը մտմտայ ու կը շարժի ի բարկութիւն. վասն զի ըր աչքին առջև եղեր է քու ամէն անկարգութիւնդ:

Գ. — Երբոր երթաս Աստուծոյ առջև դատուելու համար, ոչ վկայ պէտք է և ոչ ամբաստանող. ինքն Աստուած պիտի ըսէ քեզի, թէ ես եմ քու դատաւորդ ու վկադ: Ի՛նչ մեծ ամօթ ու նեղութիւն պիտի ըլլայ քեզի տեսնելը Աստուծոյ սրբողոված դէմքը քու վրայ, ու միտքդ գալը՝ թէ ան աստուածային աչքերը տեսեր են քու գէշ ու ամօթալի գործքերդ: Մե՛ծ կուրութիւն է քրիստոնէի մը, որ կը մեղանչէ իր թշնամւոյն սատանային առջև, որ պիտի ըլլայ չարսիսօս իր ըրածներուն: Ասկից ի զա.ո՛ ի՛նչ կուրութիւն է մե.ւ.:

ընկել պահապան հրեշտակին առջև, որ  
չի կրնար պաշտպանել դատաստանին առե-  
նը: Հապա ի՞նչ սոսկալի լինողութիւն է  
մեղանչել Աստուծոյ առջև, որ պիտի ըլ-  
լայ դատաւոր մարդու ամէն գործքե-  
րուն:

Պատշտ: Թէ որ կ'ուզես առանց մեղաց  
ապրիլ, չէ թէ մընակ պէտք է յիշես  
Աստուծոյ ներկայութիւնը, այլ և սուրբ  
Աստուածածնայ, մանաւանդ ան առեւնը,  
երբ իրեն սիրոյն համար մէկ գործք մը  
ընելու ըլլաս. և որպէս զի կարենաս ա-  
մէն գործքդ աղէկ ընել, ձեռք չզարկած  
միտքդ բեր, թէ Աստուած զիս կը տեսնայ,  
յնձի կը նայի, ու ըսէ բոլորով սրտիւ  
առ սուրբ Աստուածածինը, «Հայցեմք ըզ-  
նորագութիւն կենաց, և պաշտպան զտի-  
րամօրդ ձեռնատուութիւն»:

### ԱՂՕԹՅ

Ճանչնալով իմ յանագնութիւնս, որ ա-  
ռանց վախնալու և անըջնալու մեղանչեր  
եմ Աստուծոյ առջև, իբ մեծութիւնը բա-  
նի տեղ չդնելով, անուշ սէլը ոտքի տակ  
եմ առեր, ու հիմա երես չունենալով իր

առջևն երևնալու, քեզի կը դիմեմ սուրբ  
 Աստուածածին: Դուն որ մայր զթած ես  
 ու բարեխօս մեղաւորներու, միջնորդ եւ  
 զիր իմ հաշտութեանս: Կը ցաւիմ ու կը  
 զրդջամ որ առանց մտմբտալու մեղանչել  
 եմ իմ ստեղծողիս աչքին առջև, սրդող-  
 ցուցեր եմ իմ փրկիչս, իմ հայրս, իմ  
 դատաւորս: Չեմ կրնար գոցել ըրածներս,  
 որ ամէնն ալ յայտնի են իրեն. չեմ կըր-  
 նար սրդարանալ, ինչու որ ինքն է վկայ  
 ըրածներուս. չեմ կրնար բան մը ըսել,  
 վաւն զի գիտեմ իմ չարութիւններս. ուս-  
 տի ես ինձի ամբշնալով կը խոստովանիմ  
 մեղքերս Աստուծոյ առջև, ու կ'ըսեմ Դա-  
 վթ մարգարէին հետ. «Յեզ միայն մեղայ  
 Տէր, և զչար առաջի քո արարի»: Կ'ա-  
 պաւինիմ քու 'միջնորդութեանդ մայր ո-  
 դորմութեան, որ իմ մեղքերուս թողու-  
 թիւն ընդունիս ու տա: ինձի շնորհք, որ  
 պէս զի ասկից ետքը Աստուծոյ վախը  
 աչքիս առջևն ըլլալով, սրբութեամբ ան-  
 ցընեմ իմ կեանքս, ու արժանի ըլլամ երկ-  
 նից արքայութեան:



## ԻՆՆԵՒՏԵՍՆԵՐՈՒԳ ՕՐ

Աստուծոյ ոչ սատանային ծառայութեան  
վրայ

Ա. — Աղէջ մտմբտա թէ որո՛ւն կ'ուզես ծառայել: Աստուծո՞յ՝ թէ սատանայի, ինչու որ երկուքին մէկտեղ ծառայել չըլլար: Աստուած ու սատանայ անհաշտ թշնամի են մէկմէկու, ուստի երկուքին մէկտեղ ծառայել ու հաճոյ ըլլալ անկարելի բան է: Օր մը ապաշխարող ըլլալ Յիսուսին ձեռաց ներքե, ու մէկալ օր մեղաւոր դառնալ սատանային հետ. որ մը շերմեռանդ՝ աղօթատէր ու պահեցող ըլլալ, և օր մը մեղքի ու անկարգութեան հետ, ըսել է թէ սատանային բարեկամ եմ, ու կ'ուզեմ իրաքել զԱստուած:

Բ. — Թէ որ կ'ուզես Աստուծոյ ծառայել, նեղութիւն քուշիւր ելիչ առեն է. իսկ ուրախութիւնը սլիտի ըլլայ յաւիտեանակամ: Քանի մը տարի է ապաշխարանքդ, իսկ միսիթարութիւնը յաւիտեանակամ. թո՛ղ որ Աստուած քաղցր տէր ըլլի:



լալով, գիտէ օգնել, սիրտ տալ, ու միւլի-  
թարել զքեզ աս կենացս մէջն ալ: Թէ  
որ Աստուծոյ ծառայելու համար խաչ պի-  
տի քաշես, մի վախճար: քու խաչդ չըլ-  
լար անանկ ծանր, ինչպէս որ եղաւ ան-  
մեղ Յիսուսինը:

Գ. — Եթէ կ'ուզես սատանային ծա-  
ռայել, ուրախութիւնդ քիչ կ'ըլլայ, իսկ  
նեղութիւնդ յաւիտենական: Մտերտա մէյ  
մը անհաստ ու անօրէն մեռած թագա-  
ւորները, որ այսօրուան օրս դժոխքն են,  
ու յաւիտեանս պիւտի մեան ան տնդը:  
Թո՛ղ որ սատանան չի կրնար ամենեին աս  
աշխարհիս մէջն ալ միւլթարել իր ծա-  
ռաները. վասն զի ամէն մեղք ունի հետը  
իր նեղութիւնը. ինչպէս որ համը առած  
կ'ըլլաս մեղանչելովդ ու սատանային կամ-  
քը կատարելով: Աղէ՛կ զիտցիր աս ալ,  
որ սատանան անանկ կ'ատէ գրեզ, որ  
մէկ ուրիշ թշնամի մը չի կրնար անանկ  
ատել, ուստի ինչ բարութիւն կրնաս յու-  
սալ իրմէ:

Պտուղ: Թէ որ կ'ուզես խալճսիլ սա-  
տանային ձեռքէն, ինչի՛ր սուրբ Աստու-  
ծածնայ ոտքը, ու խնդրելով իր գորտար  
միջնորդութիւնը քեզի համար, ըսէ Գի-

սուսին. «Տուր զօրութիւն ծառայի քո, կե-  
ցո՛ զորդի աղախնոյ քո, արա՛ առ իս նը-  
շան բարութեան: Տեսցեն առելիք իմ և  
ամաչեսցեն. զի դու Տէր օգնեցեր ինձ և  
միտիթարեցեր զիս»:

### ԱՂՕԹՓ

Տարակուսեալ հոգևով կը դիմեմ քեզի  
սուրբ Աստուածածին, դուն որ քու սրբ-  
ութեամբդ կոխեցիր սատանային գլուխը,  
ու եզար մեզի միջնորդ փրկութեան ու ա-  
զատութեան անոր ձեռքէն, մի թողուր  
որ նորէն մատնուիմ սատանային ձեռքը.  
քու զօրաւոր պաշտպանութեամբդ խոր-  
տակէ իր զօրութիւնը. լուսաւորէ իմ  
միտքս որ ճանչնամ անոր խաբէութիւն-  
ները ու փոխշիմ հեռանամ որոգայթնե-  
րէն, որով կ'ուզէ հեռացընել զիս իմ  
ստեղծողէս Տուր ինձի շնորհք՝ որ ծա-  
ռայեմ մինակ Աստուծոյ իմ ստեղծողիս,  
իմ փրկչիս, իմ բարեբարիս, որ արժանի  
է ամէն սիրոյ ու ծառայութեան: Կը ցա-  
ւիմ որ այսչափ ատեն Աստուծոյ ծառա-  
յելու սեղ, սատանային մտիկ ընելով՝  
չար կամքս պաշտեր եմ, ու անկարգ յօ-

ժարութիւններս կատարեր եմ. չեմ մտնի-  
տացեր թէ օր մը պատասխան պիտի տամ  
Աստուծոյ, պիտի քննուիմ ու դատուիմ  
իր առջև: Վայ կուրութեանս, որ ամենե-  
ւին չեմ ճանչցեր իմ պարտքս, ու ան-  
հոգ եմ եղեր ընելու. ուստի կ'իյնամ քու  
ոտքդ սուրբ Աստուածածին. դուն որ այս-  
չափ հրաշք ըրեր ես մեղաւորաց դատնա-  
լուն համար, ցրցուր իմ վրաս ալ քու  
ողորմութիւնդ, որպէս շի ես ալ արգա-  
րանալով իմ մեղքերէս, փառաւորեմ քու  
գթութիւնդ, որ ամենուն կ'ուզես մայրու-  
թիւն ընել:

## ՔԱՆԵՐՈՐԳ ՅՐ

Ապաշխարութիւնը աշուղներուն վրայ

Ա. — Կ'ուզես մեղքէն ետ կենալ, կ'ու-  
զես օր մը գրեզ Աստուծոյ առջ: Գիտեմ  
որ կ'ուզես անտարակոյս: Բայց թէ երբ,  
յայտնի չէ: Այսօր չըլլար կ'ըսես. ինչու  
որ՝ ստրկելու բաներ ունիմ. սէկ բանի  
մտմբտալից ունիմ. սիրտս բանի մի-  
բան կայ՝ լմնցընեմ ու ետքը: Ասիւն

Եթէ այսօր դժարութիւն կ'լինանաս ապաշխարելու՝ վարքդ շտկելու, գիտցիր որ նոյն դժարութիւնը պիտի ունենաս ամէն օր: Հապա երբ պիտի դառնաս առ Աստուած: Կ'ըսես թէ կը նայիմ որ աս արգելքս վերնայ, սրտիս խռովութիւնը դադրի, երիտասարդութիւնս անցնի, ու եւրքը անտարակոյս ձեռք պիտի զարնեմ զիս զիս շտկելու: Քանի ատեն է որ միտքդ դրեր ես ու կը զրուցես ասիկայ, բայց ամենեկին ձեռք չես զարներ:

Բ. — Դուն որ կ'ուշացընես ապաշխարելդ, ու կը նայիս ատենի, ինչ գիտես՝ Աստուած ալ քեզի կ'սպասէ: Ինչո՞ւ համար ասանկ անհիմն բաներով քու հոգւոյդ փրկութեան գործքը ձեռքէ կը թողուս: Կը վախնամ որ ատ քանիդ համար Աստուած ալ չհամբերէ քեզի, ձանձրանայ քու սուտ խոստմունքներէդ ու քու անհաւատարմութենէդ: Իրաւ որ Աստուած ամենաբարի է, սակայն գիտցիր որ ի՞նչ բարութիւնը չափէն աւելի ցըցուցեր է քեզի, ո՛վ գիտէ՝ թէ ասկից ետքը պիտի սկսի դատաւորի պէս վարուիլ քու նկատ: Թէ որ ուզենայ իր բարութեանը համար քեզ մը ատեն ալ ամուշ վարուիլ

հետդ, արժան է որ դուն ալ ասկից ետքը  
սրդողցընես. գինքը քու մեղքովդ: Մտմը-  
տա՛ ի՛նչ ծանր ասպերախտութիւն է ը-  
րածդ:

Գ. — Ան քրիստոնեաներն որ կան դը-  
ժոխքին մէջ, կրնանք ըսել թէ ամէնքն  
ալ դատապարտուած են՝ ասպաշխարութիւ-  
նը օրէ օր ձգելով և ուշացընելով: Չի-  
կայ անանկ խենդ մը, որ ըսէ թէ չեմ  
ուզեր դառնալ՝ վարքս շտկել. բայց քիչ  
կը գտնուին խելացիք որ ըսեն, հիմա աս  
ատանս կ'ուզեմ դառնալ ու ասպաշխարել:  
Մահն երբ հասնի, ան ատենն ալ կը նա-  
յին ուշացընել, յուսալով որ չեն մեռնիր  
ան հիւանդութեան մէջ, ամ օրը ու ան  
ատենը: Մէկն որ աղէկ ատենին մէջ չէ  
ասպաշխարած, ի՛նչպէս կրնայ ընել ա-  
նանկ ժամանակ մը, ոչ Աստուած իրեն  
չէ յայտնած, ու ինքն ալ բոլոր կենացը  
մէջ ուզեր է զԱստուած խաբել: Աղէկ  
մտմըտա՛ զաօրկայ. թէ որ դուն հիմա չես  
ջանար վարքդ փոխել, վախցի՛ր որ չկա-  
րենաս ան ատենն ալ շտկել, երբոր կ'ու-  
զես:

Պատշոյ: Անոնք որ վարքերնին շտկե-  
ն, այսու ամենայնիւ շատ պիտի վախ-

ան մեռնելու ստեն. հապա ի՞նչ սոսկա-  
լի վախ պիտի քաշեն անոնք՝ որ ամե-  
նեին անհոգ են եղեր: Թէ որ մահացու  
մեղք ունիս, ջանա՛ որ շուտով երթաս  
խոստովանիս. իսկ եթէ Աստուծոյ շնոր-  
հացը մէջն ես, մտմբտա լ՛ի՛նչ թան է  
որ չի թողուր քեզի բոլորովին Աստուծոյ  
ըլլալու, ու նայէ՛ որ յաղթես անոր: Բա-  
րեխօս բռնելով քեզի սուրբ Աստուածա-  
ծինը, ըսէ իրեն. «Առ քեզ ապաւինիմք  
ամենասրբունի՛ գերագոյն և հրաշալի և  
բաշխող բարութեանց, աղբիւր ես ծարա-  
ւեաց և հանգիստ աշխատելոց»:

### ԱՂՕԹԻ

Տէ՛ր իմ Յիսուս Քրիստոս, դուն որ  
չես ուզեր մեղաւորին մահը, հապա մեղ-  
քէն դառնալը ու ապաշխարելը, ես մե-  
ղաւորս բռնուած ըլլալով սատանային ո-  
րոգայթնելուն մէջ, թէպէտ կը ճանչնամ  
մեղքերու շատութիւնը, ու քու անբաւ  
ողորմութիւնդ, որ պատրաստ է թողու-  
թիւն տալու, և իմ հոգիս մաքրելու. սա-  
կոյն անհաղութեամբս օրէ օր կը ձգեմ  
իմ գառնալս ու ապաշխարելս: Կը խոս-

տանամ ու կ'առաջադրեմ վարքս շտկելու. սակայն շունիմ սրտիս մէջ հաստատութիւն՝ առաջադրութեանս վրայ ամուր կենալու: Քու քաղցր երկայնամտութիւնդ առեր եմ ինծի սլատառ անհոգ ըլլալու. ո՛րչափ որ կ'ողորմիս ինծի ու կը համբերես, այնչափ աւելի գէշ կ'ըլլամ ու քեզ կը սրդողցնեմ: Կ'աղաչեմ բարերար Յիսուս, ցըցո՛ւր ինծի քու բարկութիւնդ աշխարհիս մէջ. որպէս զի արթննալով իմ թմրածութիւնէս, հանչնամ քու մեծութիւնդ, քու իշխանութիւնդ, քու սէրդ որ ունիս իմ հոգիս փրկելու, և զգաստութեամբ ջանամ ասկից ետքը իմ օրերո՛քու ծառայութեանդ մէջ անցընելու: Կը խնդրեմ քեզմէ փրկի՛չ իմ Յիսուս՝ միջնորդութեամբ ամէնօրհնեալ սուրբ մօրդ, մի՛ խնայեր մարմնոյս, որպէս զի հոգիս ազատի յաւիտենական տանջանքէն:

---

## ՔԱՆԵՐՈՐԿ ՍՌԱԶՆԵՐՈՐԿ ՕՐ

խոստովանալու փրայ

Ա. — Կը մեղանչես, ու չես ուզեր շուտով երթալ խոստովանանք ըլլալ: Թէ որ հիւրնդնաս, մէկէն բժըշկի կը վազես, որով կը ցուցընես թէ մարմնոյդ առողջութիւնը աւելի մեծ դրեր ես քան զհոգւոյդ: Քիտցի՛ր որ՝ եթէ առանց խոստովանանքի մեղքիդ մէջ մեռնիս, խեղճ պիտի ըլլաս յաւիտեանս յաւիտենից: Որչափ ուշացընես խոստովանանքդ, այնչափ մեղքը կը հաստատուի հոգւոյդ մէջ, կ'ըլլայ քեզի սովորութիւն ու բնութիւն: Կը նայիս որ մէկ մեծ տօնի մը, կամ զատկէ զատիկ հգես խոստովանանք ըլլալդ. ու բէ՛ն եթէ ձեռքդ ըլլար՝ կ'ուզէիր որ զատկին՝ և կամ խոստովանանք երած օրդ մեռնիս. սակայն չգիտես երբ կը մեռնիս:

Բ. — Կընաս ըսել թէ մահացու մեղք չեմ ըրած. ուստի չ'ամ ալ խոստովանիր: Իսկ զիտգիր որ ներելի մեղքերէն ազատ



չես, ու ամէն օր կ'ընես. ինչ ծանր պատիժներ պիտի քաշես քաւարանին մէջ ներելի մեղքերու համար: Կրնաս հիմակուրնէ թեթևցունել պատիժները շուտ շուտ խոստովանանք ըլլալով. ինչո՞ւ համար ատանկ անհոգ ես հոգևոր օգտիդ վրայ: Թէ որ երեսդ մէկ աղտ մ'ըլլայ, չես ուզեր երևնալ մարդկանց մէջ՝ ինչուա՞ն որ չլուացուիս. հապա հոգւոյդ աղտերովը ինչպէս առանց ամբշնալու կ'երևնաս ու կը պտրտիս Աստուծոյ ու հրեշտակներուն առջև:

Գ. — Կրնաս ըսել թէ շատ հեղ խոստովանանք եղայ ու օգուտ մը չանայ. բայց մտմբաս թէ արդեօք աղէկ խոստովանանք եղե՞ր ես: Ասկից զատ՝ թէ որ աղէկ քննելով քու մեղքդ, ըսելով, առաջադրելով, խոստովանանք ըլլալով հորէն կ'իյնաս. հապա հիմա որ ամենեին անհոգ ես, ինչ օգուտ կրնաս տեսնալ: Արշափ մեծ քան կ'ըլլար մէկ գատաւար. տուած մեղաւորի մը, թէ որ ունենար անատենը ու շնորհքը խոստովանանք ըլլալու՝ ինչ որ դուն ունիս հիմա. սակայն կու գայ ժամանակ, որ դուն ալ պիտի փափարիս ունենալու սա հիմակուան ատենը, ու պիտի չունենաս:

Պատու: Եթէ աղէկ մտմբտաս որ Աստուած կրնայ պատժել զքեզ մեղքիդ մէջ, անստարակոյս չես աւշացըներ քու խոստովանանքդ: Քննէ՛ առջի ըրած խոստովանանքներդ, ու անոնց մէջի եղած պակասութիւնները ջանա՛ որ շուտով շտկես, միջնորդ բռնելով քեզի սուրբ Աստուածածինը, ու ըսէ՛ իրեն բոլոր սրտով. «Աղաչեա՛ վասն մեր զատ ի քէն զմարմնացեալն Աստուած, ներել մեզ՝ անուս առնել ըզյանցանս մեր»:

### ԱՂՕԹՅՈՒՆ

Աս ի՛նչ մեծ ողորմութիւն է որ ինծի ըրեր ես փրկիչ իմ Յիսուս, տալով իմ ցաւերուս համար մէկ զօրաւոր դեղ մը, հշմարիտ ապաշխարութիւնը, որ անով մէկէն բժշկուիմ իմ հոգևոր հիւանդութեանէս, սակայն ես չգիտնալով, մանաւանդ թէ բանի տեղ չդնելով անոր մեծ օգուտը, չէ թէ մինակ անհոգ եմ եղեր բանեցընելու, այլ և վնասուեր եմ անկից՝ չարաչար գործածելովս: Վայ ինծի, որ չամբ անչա՞ն խոստովանանքներ եմ ըրեր, ստանց բնութեան, ստանց զղջումի, ա-

աանց առաջադրութեան, ու առանց ըսե-  
 լու ամէն մեղքս քահանային. ուստի աւելի  
 վնասուեր եմ խոստովանանքէն, քան թէ  
 օգուտ եմ տեսեր: Ասոր համար կը ցա-  
 ւիմ ու կը զղջամ Աստուած իմ Յիսուս,  
 որ ինձի շրած բարերարութիւնդ չճանչ-  
 նալով, սրգոզցուցեր եմ զքեզ՝ իմ տէրս,  
 իմ փրկիչս, իմ բժիշկս, իմ կեանքս.  
 ուստի հիմա հիւանդ ըլլալով հեզիս, կը  
 դիմեմ քեզի՝ ու խոնարհութեամբ սրտի  
 կ'իյնամ քու ոտքդ, ու անդադար կ'աղա-  
 չեմ աւետարանին մէջի գրուած բորոտին  
 հետ. «Տէր, եթէ կամիս, կարող ես զիս  
 սրբել». ինչուան որ երկնցընես քու սուրբ  
 ձեռքդ իմ հոգւոյս վրայ, ու ըսես. «կա-  
 միմ սրբեաց». որպէս զի ողջըննւելով իմ  
 հիւանդութենէս, կարենամ քու ետեւդ եր-  
 թալ ու փառաւորել ամենակարող զօրու-  
 թիւնդ, որ ամենուն բարին ու փրկութիւ-  
 նը կ'ուզես:

---

## ԲՍԱՆՆԵՐՈՐԳ ԵՐԿՐՈՐԳ ՕՐ

Սուրբ Գաղտնիքի օրաց

Ա. Ինչ մեծ պատիւ է որ Յիսուս ը-  
րեր է բեզի սա բանովս: Սուրբ հաղոր-  
դութեամբ Յիսուս կ'ըլլայ մեզի բարե-  
կամ, կ'ըլլայ ընտանի ու կ'ըլլայ իմ  
տէրս: Կը կերակրէ զիս իր սուրբ մար-  
մրնովն ու անզին արիւնով, և զիս բուժ-  
րովին իրեն կը նմանցընէ: Իմ սիրտս  
ան ատենը կ'ըլլայ սուրբ ու մաքուր քան  
զժամերը, քան զխորանները, քան զսկիհը  
ու քան զայլ ամէն սուրբ գործիքները:  
Իմ հոգիս կրնայ ան ատեն ըստիլ ար-  
քայութիւն, ինչու որ հոն նստած է Քրիս-  
տոս փառաց թագաւորը:

Բ. — Արչափ մեծ նախատինք կ'ընեմ  
Յիսուսի, երբոր ատանց ջերմեռանդու-  
թեան երթամ ընդունիլ զինքը. շուտով  
հեռանամ իրմէ ատանց շնորհակալու-  
թեան, փախչիմ իր տեսութենէն, չեր-  
թամ իր սուրբ աղօթք ընելու, չամբշնամ  
ըր ներկայութենէն՝ որ նստած է խորա-

նին վրայ : Ասանկ նախատինքներ՝ մա-  
նաւանդ թէ քան զասոնք շատ աւելի,  
որչափ տուեր եմ Յիսուսին, մեղքի մէջ  
ըլլալով ընդունելու եմ զինքը, ազտոտ բեր-  
նով՝ Յուդային պէս ճաշակելու եմ իր ա-  
մենասուրբ մարմինը, ու դժոխքի պէս սա-  
տանաներով լեցուած հոգիս՝ ուզելու եմ  
ներս առնել իմ փրկիչս :

Գ. — Գիտե՞ս ինչ շնորհքներ կու տայ  
քեզի Յիսուս աս սուրբ հաղորդութեամբս :  
Կը զօրացունէ զքեզ՝ չար սովորութիւն-  
ներդ յազթելու, սատանային դէմ դնելու,  
աշխարհիս խարէութիւններէն հեռանալու :  
Աս սուրբ կերակուրը արիութիւն տուաւ  
մարտիրոսներուն, սիրտ տուաւ կուսանը-  
նէրուն, ու զանոնք սրբութեան հասուց :  
Ետ մեծ խենդութիւն կ'ընեմ, թէ որ  
անհոգ ըլլամ վաստակելու աս շնորհքներս :  
Ուսկից է որ միշտ ազար եմ փորձու-  
թիւններու դէմ, ու ամենեին առաջ չեմ  
երթար առաքինութեանց մէջ, վասն զի  
պատկառանքով չեմ մօտենար Յիսուսին  
քովը . բանի տեղ չեմ դնել Յիսուսին  
ներկայութիւնը, չեմ մամլտար յարժանա-  
ւոր պատուով ընդունիլ զինքը իմ սիրտս :


Ինչո՞ւ համար փոյթ չունիմ բարի վար-  
քով զիս իրեն սիրելի ընչլու :

Պատասխան : Եթէ ամէն օր չես կրնար սըր-  
բութիւն առնել, ջանա՛ որ զոնէ հոգևո-  
րապէս բաղձանքով հաղորդուիս, բարե-  
խօս բռնելով սուրբ Աստուածածինը : Գիտ-  
ցի՛ր որ՝ եթէ սուրբ Աստուածածինը մէկու-  
մը վրայ մասնաւոր խնամք ունենայ, ա-  
նիկայ առանց հաղորդութեան չմեռնիր :  
Ուստի պատուելով իր քաղցր մայրութիւ-  
նը, ըսէ՛. «Սրբուհի Մարիամ սափոր ոս-  
կի և տապանակ կտակարանաց, որ զ՛ի  
վերուստ զհացն կենաց պարգևեցեր քաղ-  
ցեսլ բնութեանս. առ նա միշտ բարեխօ-  
սեա՛ վասն քաւութեան մեղաց մերոց» :

## ԱՂՕԹԻ

Չգիտեմ թէ ի՞նչ բանով շնորհակալու-  
թիւն ընեմ քեզի փրկի՛չ իմ Յիսուս, քու  
անհուն սիրոյդ համար որ ցըցուցեր ես  
ինձի ամենասուրբ հաշորդութեան խոր-  
հըրդովը : որով տուեր ես զքեզ ինձի կե-  
րակուր աւ ըմպելի . ուզեր ես առանց  
բաժնուելու կենալ իմ հետս, ըլլալ ինձի  
բարեկամ, ընտանի ու սիրելի : Վայ ինձի,

ո՛րչափ անարժանութեամբ ընդունենք եմ  
 զքեզ իմ սիրտս, ո՛րչափ անպատիւ ըրեր  
 եմ քու մեծութիւնդ, ո՛րչափ սրդողցուցեր  
 եմ քու սէրդ՝ առանց պատրաստութեան  
 ու առանց ջերմեռանդութեան ընդունելով  
 զքեզ իմ հոգիս: Անոր համար զրկուեր  
 եմ քու շնորհքէդ, պաղեր եմ քու սէրէդ,  
 չեմ առեր քու անուշութիւնդ: ուստի ան-  
 հաստատ եմ եղեր առաքինութեան վրայ,  
 ու հոգիս ալ տկար մնալով, խաբուեր է  
 սատանայէն ու հեռացեր է քեզմէ: Հիմա  
 ճամ չնալով իմ պակասութիւնս, կը ցաւիմ  
 սպերախտութեանս վրայ, որ այսպիսի  
 անհուն պարգևդ մոռցեր եմ, ու կ'աղա-  
 չեմ զքեզ փրկիչ իմ Յիսուս, թողութիւն  
 տալով ըրած մեղքերուս, սրբէ՛ ու նորո-  
 զէ՛ իմ հոգիս, որ ասկից հտըր արժանա-  
 պէս ընդունիմ զքեզ. վառէ՛ իմ սիրտս  
 աստուածային սիրովդ. որ ես ալ ըլլամ  
 քեզի պատարագ սիրոյ, նուիրելով իմ բո-  
 լոր կեանքս քու ծառայութեանդ:



## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՕՐ

Աստուծոյ ծածուկ շնորհքներուն վրայ

Ա. — Գիտե՞ս թէ Աստուած ի՞նչ ճամբաներով մեզ կանչել է ու կը կանչէ իրեն. երբեմն սրտերնիս շարժելով ու մշտքերնիս լուսաւորելով. երբեմն ծածուկ մէկ քարեկամի մը, կամ խոստովանահօր բերնով. երբեմն յայտնի պատիժ մը ղըրկելով, կամ մէկ քարոզ մը լսել տալով, կամ հոգևոր գրքեր կարդալ տալով: Մեղաւոր մը երբոր դառնալու ըլլայ իր մեղքէն, կարծես թէ Աստուած կ'ըսէ անոր սրտին մէջ, թէ փոխէ՛ք ու վարքդ: Յանկարծակի մահ մը թէ որ հանդիպի մէկուն, ամենուն քարոզ կ'ըլլայ, թէ խոստովանանք եղէք մեղքերնիդ, ու պատրաստ կեցէք: Հիւանդութիւնները ու աշխարհիս նեղութիւնները անդաշտը քարոզ կու տան, թէ մեղքէն փախէ՛ք ու հեռացէք: Հանշիտը և ուրախութիւնը կը շարժէ սրտերնուս փափաքը, թէ ո՛րչափ անուշ է Աստուծոյ ծառայելը:



Բ. — Աստուած թէպէտ և կը կանչէ զմեզ, սակայն մեզի կ'իյնայ հնազանդիլ իրեն: Հոգին սուրբ իրաւ յոյս է՝ որ կը լուսաւորէ, կ'արթնցընէ ու կը պտղաբերէ. բժիշկ է՝ որ կ'առողջացընէ, բայց անոնց մինակ կու տայ առողջութիւն, որոնք որ կ'ուզեն ու կը փափաքին. ան սրտերը մինակ շէն կը պահէ ու կը զարդարէ, որոնք որ իր առջևը զիրենք կը բանան. ան հոգիները կը լուսաւորէ, որոնք որ իրենց պատուհանը չեն զոցեր արևուն դէմ: Աստուած շնորհք կու տայ մեզի, կ'ուզէ որ փրկութեան հասնինք. բայց չուզեր որ առանց աշխատանքի փրկուինք. կ'ուզէ որ սուրբ ըլլանք, բայց չուզեր որ բռնութեամբ ըլլանք: Ինչ մեծ անկարգութիւն է փախչիլը քարոզէն, թողուլ խոստովանահայրը, չկարդալ հոգևոր գիրք մը, որ մարդուն սիրտը կը շարժէ, ու մեղքը երեսը կու տայ: Աս փախչիլս չէ թէ մինակ անհնազանդութիւն է, հապա ապստամբութիւն ալ կը սեպուի Հոգւոյն սրբոյ դէմ:

Գ. — Աստուած կը կանչէ զմեզ, սակայն վսի մեզի՝ թէ որ շուտով մաիկ չընենք իրեն: Սուրբ Մատթէոս Յիսուային

ճայնը լսածին պէս՝ թողուց իր ամէն բանը, ու զնաց Յիսուսին ետեէն. ուստի մարտաւոր ըլլալովը եղաւ առաքեալ ու անտարանիչ: Սուրբ Պետրոս Յիսուսին մէկ նայելովը զգաստացաւ իր մեղքէն, ու ապաշխարութեան արցունքով լեցուեցան իր աչքերը. զղջաց ու եղաւ սուրբ և գլուխ առաքելոց: Յուդա մտիկ չըրաւ Յիսուսին խրատներուն ու իր խղճմտանքին դրդելուն, անոր համար յուսահատեցաւ ու դատապարտուեցաւ: Ո՛վ գիտէ թէ ան ծածուկ շնորհքն որ հիմա սրտիդ մէջը կ'իմանաս, ըլլայ եւրբի շնորհքը որ Աստուած կուտայ քեզի. եթէ մտիկ ըրիր, փրկութեան կը հասնիս. թէ չէ, կը դատապարտուիս: Թէ որ Աստուած կը կանչէ զքեզ աղէկ կենաց մը ձեռք զարնելու, ու դուն ալ քու գլխուդ գէշ ճամբայ մը բռնես. նայէ՛ որ ան ատենը ի՛նչ պիտի ըլլայ քեզի:

Պատգ: Դի՛ր թէ հոգեվարութեան մէջ ես. ու մտմբտա թէ ի՛նչ բանի վրայ խղճմտանքդ աւելի կրնայ զարնել, հիմա կուրնէ ջանա՛ որ դեղ ընես, խնդրելով սուրբ Աստուածածնայ միջնորդութիւնը, ու քսէ՛ իրեն շուշորով սրտիւ. « Ի քեզ

ե՛ք ապաւինեալ Քրիստոսի մայր Աստու-  
ծոյ մերոյ... մի՛ դադարի՛ր բարեխօսել  
վասն մեր՝ Քրիստոսի մայր Աստուծոյ մե-  
րոյ » :

### ԱՂՕԹՔ

Վայ իմ խաւարած մտքիս , չեմ տե-  
սեր Աստուծոյ ինձի սուած ծածուկ շը-  
նորհքները . վայ իմ քարացեալ սրտիս ,  
որ չեմ շարժել Աստուծոյ շնորհքներովը :  
Ո՛րչափ կանչեր է զիս Աստուած իր ու-  
ղորմութեամբը յորդորելով իմ հոգիս . իր  
արդարութեամբը սրտովելով իմ մարմինս  
ու ուննցած էարիքս . սակայն ես ոչ ու-  
ղորմութենէն շարժեր եմ , և ոչ արդարու-  
թենէն վախցի՛ր եմ : Ո՛րչափ շնորհքներ  
կորսնցուցեր եմ , որով կրնայի դառնալ  
իմ մեղքէս , կրնայի բարիք ընել , կրնայի  
հանոյ ըլլալ Աստուծոյ , ու կրնայի փրո-  
կութեան հասնիլ : Հիմա որ զրկուած եմ  
ամենէն , շղիտեմ ընելիքս . ըսյց էթէ ա-  
պաւինիլ քու բարեխօսութեանդ , սուրբ Աս-  
տուածածին . ո՛վ զիտէ՛ թէ աս ալ մաս-  
նաւոր շնորհք մըն է ինձի , որ կը շար-  
ժէ զիս քու մայրութեանդ դիմել , քու

սուիւր: Մէկ պզտիկ ներելի մեղք մը՝ որ Աստուծոյ դէմ կ'ըլլայ, շատ աւելի փաստ է՝ քան երկնի ու երկրիս ոչընչանալը:

Բ. — Թէ որ մէկը դիպուածով կամ առանց գիտնալու մեղանչէ արժանի է թողութեան. բայց գիտնալով թէ ան սուտը, կամ աս անհնազանդութիւնը ներելի մեղք է, ու անհոգ ըլլալով մեղանչէ, ըսել է թէ կ'ուզեմ իմ կամքս կատարել, ու հոգս չէ Աստուծոյ սրդողիւր: Սակայն գիտցիր որ սովորութիւն ընելով զԱստուած սրդողցընելը, ու բանի տեղ չդնել Աստուծոյ կամքին անհնազանդ ըլլալը, թէպէտ և մանր ու ոչինչ բաներու մէջ ըլլայ, ծանր կու գայ իր հայրական սրտին. տեսնելով որ զաւկընները անհոգ են ու բանի տեղ չեն սեպեր իրենց հօրը սրդողիւր:

Գ. — Թէ որ ասանկ անհոգ ըլլալով ներելի մեղքերուն վրայ կեանքդ անցընես, գիտցիր որ օր մը անտարակոյս կ'իյնաս մահացու մեղքի մէջ. ինչու որ Աստուած շատ չի կրնար կենալ ան մարդուն հետ, որ զինքը անդադար կը սրդողցընէ: Ասկից զատ՝ չէս մտմբտար որ մանր մեղքերով կամաց կամաց հոգւոյդ ուժը կը պակսի, մահը ու դժոխքը քեզ չեն վախցըներ, ու

սուրբ: Մէկ պզտիկ ներելի մեղք մը՝ որ Աստուծոյ դէմ կ'ըլլայ, շատ աւելի փաստ է՝ քան երկնի ու երկրիս ոչընչանալը:

Բ. — Թէ որ մէկը դիպուածով կամ առանց գիտնալու մեղանչէ արժանի է թողութեան. բայց գիտնալով թէ ան սուտը, կամ աս անհնազանդութիւնը ներելի մեղք է, ու անհոգ ըլլալով մեղանչէ, ըսել է՝ թէ կ'ուզեմ իմ կամքս կատարել, ու հոգս չէ Աստուծոյ սրդողիլը: Սակայն գիտցիր որ սովորութիւն ընելով զԱստուած սրդողցընելը, ու բանի տեղ չդնել Աստուծոյ կամքին անհնազանդ ըլլալը, թէպէտ և մանր ու ոչինչ բաներու մէջ ըլլայ, ծանր կու գայ իր հայրական սրտին. տեսնելով որ զաւկընները անհոգ են ու բանի տեղ չեն սեպեր իրենց հօրը սրդողիլը:

Գ. — Թէ որ ասանկ անհոգ ըլլալով ներելի մեղքերուն վրայ կեանքդ անցընես, գիտցիր որ օր մը անտարակոյս կ'իյնաս մահացու մեղքի մէջ. ինչու որ Աստուած շատ չի կրնար կենալ ան մարդուն հետ, որ զինքը անդադար կը սրդողցընէ: Ասկից զատ՝ չէ՛ս մտմբտար որ մանր մեղքերով կամաց կամաց հոգւոյդ ուժը կը պակսի, մահը ու դժոխքը քեզ չեն վախցըներ, ու

Աստուած ալ քիչ քիչ կը հեռանայ քեզմէ։  
 Շատ անգամ մահացու մեղքերուն քով  
 կը պտըտիս, ու չես իմանար. ո՞վ գիտէ  
 թէ չե՞ս ալ իյնար։ Կ'ուզեմ կ'ըսես փրր-  
 կութեան հասնիլ, ու միշտ վտանգներու  
 մէջ կը պտըտիս։

Պատուհ. Չանա՛ որ պատարագ տեսնալու  
 ատենդ՝ մասնաւոր պատկառանք մ'ունե-  
 նաս, ու պարկեշտութեամբ աղօթք ընես.  
 գիտցի՛ր որ շատ պակասութիւններ թեթե-  
 ու ոչինչ բան մը կ'երեւան, բայց ան-  
 հաճոյ են Աստուծոյ ու սուրբ Աստուա-  
 ծածնայ. ուստի խնդրելով քեզի օգնու-  
 թիւն, ըսէ՛ առ սուրբ տիրամայրը. «Ի քեզ  
 եմք ասլաւինեալ, ամէնօրհնեալ սրբուհի.  
 լե՛ր բարեխօս անդադար վասն մերոյ փրր-  
 կութեան»։

### ԱՂՕԹՔ

Ո՛վ անարատ կոյս սուրբ Աստուածա-  
 ծին, որ սրբութեան օրինակն ես ու ան-  
 մեղութեան հայլի, կ'աղաչեմ քու անա-  
 րատ մաքրութեանդ համար լուա ու սրբէ  
 իմ սիրտս ու հոգիս ամէն աղտոտութե-  
 նէ։ Դուն որ աղբիւր ես Աստուծոյ շնորհք-

ներուն, ու քեզմով կ'ընդունինք մեր կեն-  
 դանութեան ջուրը, արժանի՛ ըրէ իմ ծա-  
 րուած հոգիս՝ որ թուլցեր ու տկարացեր  
 է զանազան մեղքով, որպէս զի առնում  
 զօրութիւն ու արիանամ ամէն տեսակ  
 մեղքերու դէմ. մանաւանդ ան մեղքերուն,  
 որ առանց գիտնալու, առանց ճանչնա-  
 լու, ու առանց մտածելու օրէ օր անդա-  
 դար լէյնալով՝ կը սրզողցընեմ իմ քաղցր  
 փրկիչս, իմ ահաւոր տէրս, ու իմ զթած  
 հայրս: Գիտեմ մայր Աստուծոյ, որ քեզի  
 հաճոյ է սս խնդիրքս. ուստի անտարա-  
 կոյս եմ թէ կու տաս ինձի անանկ շը-  
 նորհք մը, որ կարենամ իմ կեանքս սուրբ  
 ու անարատ անցընելով փառաւորել իմ  
 փրկիչս Յիսուս, ու արժանի ըլլալ արքա-  
 յութեան:

---

## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՆՆՈՒՄԻ ԶԻՆԳԵՐՈՐԴ ԶԻՆԳԵՐՈՐԴ ԶԻՆԳԵՐՈՐԴ

Քրիստոսի աննումի վրայ

Ա. - Մտմբտա՛ թէ ինչ բան է քա-  
 ւարանը: Մէկ բանա՛ մըն է լեցուն կրա-  
 կով, զոր վառեր է աստուածային արդա-  
 րութիւնը: Անանկ տեղ մըն է, ուր մարդը  
 թէպէտ և կը սիրէ զԱստուած, սակայն  
 կը քաշէ Աստուծոյ պատիժն ալ, կը փա-  
 փաքի տեսնալ իր ստեղծողը, ու չի կըր-  
 նար, կը սպասէ ատենի մը՝ որ երթայ  
 արքայութիւն, ու չգիտեր թէ երբ կը  
 հասնի: Կը չարչարուի անանկ ծանր տան-  
 ջանքներով, որ չի գտնուիր աշխարհիս  
 մէջ. սակայն պէտք է որ քաշէ առանց  
 վարձքի, առջի ըրած թեթև մեղքերուն  
 համար, ու թողուած մեղքերուն ալ ա-  
 պաշխարանքը չընելուն համար: Անանկ  
 տեղ մըն է, որ մինակ մտմբտալը մար-  
 դուն սիրտը դող կը ձգէ. սակայն դուն  
 ամենէին բանի մը տեղ չես դներ զանի-  
 կայ:



Բ. — Մտմըտա թէ ինչո՞ւ համար կ'երթըցուի քաւարանը: Թեթեւ բանի մը համար, որ մարդիկ մեղքի տեղ ալ չեն դրներ: Պզտիկ անհոգութիւն մը աղօթքի մէջ. պզտի խօսակցութիւն մը եկեղեցւոյ մէջ. ոչինչ փափաք մը կամ մտմտուք մը աշխըրքիս ունայն բաներուն. աւելորդ ծիծաղ մը. և այլ ուրիշ մանր բաներ, ինչպէս որ Աստուած շատ անգամ յայտներ է սուրբերուն: Ասոնցմէ իմացիր թէ ինչ պիտի ըլլայ քեզի այդչափ բարկութիւններուդ համար, սուտ խօսիլներուդ, անհնազանդութիւններուդ, եկեղեցւոյ մէջ ըրած անկարգութիւններուդ, պարտքերուդ վրայ անհոգ ըլլալուդ, դատարկ խօսքերուդ, աւելորդ զարդարանքներուդ ու այլ անհամար պակասութիւններուդ համար: որ ըրեր ես ուրիշի դէմ, ու չես մտմըտար դեղ մը ընելու:

Գ. — Մտմըտա՞ թէ ո՞րչափ ատեն պիտի կենաս քաւարանին մէջը: Աստուած ամէն մէկուն իր մեղացը յարմար կը չափէ պատիժը. որչափ շատ է ներելի մեղքդ կամ թողուած մահուչափ մեղքերուդ քաշելու պատիժը, այնչափ աւելի պէտք է սր զրկուած կենաս Աստուծոյ ցանկալի

տեսութենէն : Ան սաստիկ փափաքն որ  
 ունի մեր հոգին մեռնելէն ետքը շուտով  
 տեսնալու զԱստուած, որչափ քիչ ատեն  
 ալ զրկուած մնայ անկից, միշտ մեծ տանջանք  
 է ու շատ կ'երենայ իրեն, ուրով  
 հետեւ չէ հասած իր փափաքանացը ու  
 ետքի վախճանին. ուստի մէկ օրը ամիս-  
 ներ կ'ըլլայ իրեն, և ամիսը հարիւրաւոր  
 տարիներ : Նայէ թէ ինչ գնով ծախու  
 կ'առնես մէկ թեթեւ ու ներելի մեղք մը :

Պտուղ : Մասնաւոր ջերմեռանդութիւն  
 ընելով ըսէ՛ ի խորոց կարդացի սաղմոսը՝  
 քաւարանը եղած ան հոգիին համար, որ  
 իր կենացը մէջ աւելի ջերմեռանդ է եղեր  
 սուրբ Աստուածածնայ. աղաչելով զտի-  
 րամայրը, որ զքեզ ալ ազատէ քաւարա-  
 նին տանջանքէն. ուստի ըսէ՛ իրեն բոլո-  
 րով սրտիւ. «Սիրոյ անմահ փեսային ե-  
 դեր դու մայր Մարիամ. բարեխօսեա՛ վասն  
 մեր ի յայնմ աւուր ահեղին» :

## ԱՂՅԹՔ

Ո՛վ սրբութիւն սրբոց և անբաւելի բա-  
 րութիւն Աստուած իմ Յիսուս, որ ուզե-  
 նալով իմ փրկութիւնս՝ դրեր ես ամէն

նամբայ մաքրուելու, սրբուելու ու անա-  
 րատութեամբ քու քովդ հասնելու արքա-  
 յութեան մէջ: Գիտեմ տէր, որ հողեղէն  
 ըլլալովս չեմ կրնար աշխըրքիս մէջ ա-  
 զատ ըլլալ ամէն մեղքէ, չեմ կրնար ա-  
 նանկ սրբուիլ, որ չըլլամ կարօտ քաւա-  
 րանին մաքրութեան. սակայն ապաւինե-  
 լով քու ողորմութեանդ՝ կ'աղաչեմ փրկի՛չ  
 իմ Յիսուս, տո՛ւր ինձի որ աս աշխըրքիս  
 մէջը քաշեմ իմ ապաշխարանքս, հոս նե-  
 դուիմ, հոս տանջուիմ, հոս խաչուիմ ու  
 մեռնիմ քեզի հետ, որպէս զի լուացուե-  
 լով իմ ամէն աղտոտութենէս՝ առանց տան-  
 ջանաց քաւարանի՛ն արժանի ըլլամ ամե-  
 նասուրբ նրեսդ տեսնալու: Կը խնդրեմ  
 քեզմէ ալ մայր ողորմութեան. քու մայ-  
 րական խնամքդ ցուցընելով իմ վրաս, միջ-  
 նորդ եղիր առ Որդիդ քո միածին աս իմ  
 խնդիրքս կատարելու, որպէս զի մաքուր  
 և անբիծ հոգևով աղէկ ծառայեմ Աստու-  
 ծոյ, ու քու պաշտպանութեամբդ առանց  
 քաւարանի հասնիմ արքայութիւն, և հոն  
 վայլեմ իմ յաւիտենական երանութիւնս՝  
 տեսնալով զԱստուած ու ժառանգելով զին-  
 քը յաւիտեանս յաւիտենից:

Թիւններ ալ քաշած կ'ըլլայ իր սնէն դուրս  
 ըլլալով: Սակայն աս ամէն վշտաց մէջ  
 չլսուեցաւ բերնէն մէկ ճիչ մը, կամ ա-  
 չուրներէն արցունք մը: Յիսուս ասանկ  
 համբերող է. իսկ դուն հանգստեան և ու-  
 ըրախութեան ետեւէ ես:

Գ. — Մամբրտա՛ Յիսուսին խոնարհու-  
 թիւնն ալ, նայէ՛ ինչպէս ծնաւ: Մութ  
 զիշեր ատեն, ու անծանօթ տեղ մը, չու-  
 նեցաւ մէկը՝ որ իրեն ծառայէ, բայց եթէ  
 իր մայրը՝ ու սուրբ Յովսէփ: Ինչ մար-  
 դիկներու հանչցույ զինքը. մէկ քանի գե-  
 դացի հովիւներու. երեցըննլով զինքը մէկ  
 խեղճ աղբրտի մը պէս. ու չգտնուեցաւ  
 մէկը, որ զինքը զիշեր մը տունն ընդունի  
 ողորմութեան համար: Յիսուս ասանկ խո-  
 նարհ է, իսկ դուն կ'ուզես որ ամէնը քեզ  
 պատուեն ու մեծարեն: Գնա՛ մտքովդ Յի-  
 սուս մանուկին քովը, ու մտիկ ըրէ ինչ  
 քարոզ կու տան քեզի ան մտուրը, ան  
 չոր խոտերը ուր պառկեր է Քրիստոս, ու  
 ամբոջցի՛ր քու կենացդ վրայ:

Պատուդ: յովորութիւն ըրէ քեզի, որ ա-  
 մէն գործ քիզ մէջ միտքդ բերես Յիսուս  
 ու սուրբ Աստուածածինը, իրենց յանձ-  
 նելով քու ամէն բանդ՝ ու խնդրելով օգ-

Թիւններ ալ քաշած կ'ըլլայ իր անէն դուրս  
 ըլլալով: Սակայն աս ամէն վշտաց մէջ  
 չլսուեցաւ բերնէն մէկ ճիչ մը, կամ ա-  
 չուրներէն արցունք մը: Յիսուս ասանկ  
 համբերող է. իսկ դուն հանգստեան և ու-  
 րախուժեան ետեւէ ես:

Գ. — Մամբրտա՛ Յիսուսին խոնարհու-  
 թիւնն ալ, նայէ՛ ինչպէս ծնաւ: Մութ  
 գիշեր ատեն, ու անծանօթ տեղ մը, չու-  
 նեցաւ մէկը՝ որ իրեն ծառայէ, բայց եթէ  
 իր մայրը՝ ու սուրբ Յովսէփ: Ինչ մար-  
 դիկներու ճանչցույ զինքը, մէկ քանի գե-  
 դացի հովիւներու. երեցընելով զինքը մէկ  
 խեղճ աղբրտի մը պէս. ու չգտնուեցաւ  
 մէկը, որ զինքը գիշեր մը տունն ընդունի  
 ողորմութեան համար: Յիսուս ասանկ խո-  
 նարհ է, իսկ դուն կ'ուզես որ ամէնը քեզ  
 պատուեն ու մեծարեն: Գնա՛ մտքովդ Յի-  
 սուս մանուկին քովը, ու մտիկ ըրէ ինչ  
 քարոզ կու տան քեզի ան մսուրը, ան  
 չոր խոտերը ուր պատկեր է Քրիստոս, ու  
 ամբողջի՛ր քու կենացդ վրայ:

Պատուդ: յովորութիւն ըրէ քեզի, որ ա-  
 մէն գործ քիզ մէջ միտքդ բերես Յիսուս  
 ու սուրբ Աստուածածինը, իրենց յանձ-  
 նելով քու ամէն բանդ՝ ու խնդրելով օգ-

նութիւն՝ որ կարենաս ըլլալ ճշմարիտ հե-  
տևող Քրիստոսի, ու ըսէ՛ բոլորով սրտիւ.  
«Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ  
է պատուդ որովայնի քո»:

### ԱՂՕԹՔ

Ո՛վ Աստուած իմ Յիսուս, մտմտալով  
քու խոնարհութիւնդ, քու ազքատութիւնդ,  
քու նեղութիւնդ որ քաշեր ես ինձի հա-  
մար, մանաւանդ պզտիկութեանդ ատեն,  
կը ցաւիմ ու կը զղշամ իմ հպարտու-  
թեանս վրայ: Դուն որ Աստուած ըլլա-  
լով, անկարօտ՝ ոչ մէկ քանի, ուզեցիր  
իմ փրկութեանս համար զրկուիլ ամէն  
քանէն, ինչուան չգտնուեցաւ տուն մը՝  
ուր կարենաս ծնանիլ ու հանգչիլ. իսկ  
եւ որ ոչինչ եմ քու առջևդ՝ իմ հաւար-  
տութեամբս չէ թէ միեակ հանգիստս կը  
փնտռեմ, այլ և աւելորդ ու անշահ քա-  
ներու ետէէ կմ, որով կը ցուցընեմ թէ  
չեմ քու ճշմարիտ աշակերտդ, չեմ ուզեր  
քու ետէէդ երթալ, ու վարքիդ նմանիլ:  
Ասանկ ըլլալով՝ ի՞նչպէս կրնամ յոյս ու-  
նենալ արքայութիւն հասնելու, ու իմ հո-  
գիս փրկելու, որովհետև արքայութեան

ճամբէն դուրս կը սլտըտիմ, ու չեմ ուզեր  
քու խոնարհութեանդ հետևիլ: Կ'աղաչեմ  
փրկի՛չ իմ Յիսուս, միջնորդութեամբ ա-  
նարատ ծնողիդ լուսաւորէ իմ միտքս, զօ-  
րացուր իմ հաւատքս որ կարենամ ճանչ-  
նալ ինձի տուած օրինակներդ, ու բոլո-  
րով սրտիւ հետևիլ անոնց. որպէս զի  
վարքովս ցուցընեմ թէ իրաւ քու աշա-  
կերտդ եմ, ու կը փափաքիմ զքեզ պաշ-  
տել, զքեզ փառսւորել ու յաւիտեան քե-  
զի հետ ըլլալ արքայութեան մէջ:

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՅԹՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսի մեզի տաւած օրինակներուն վրայ

Ա. — Յիսուս իր տղայութեան ատեն  
միշտ հնազանդ եղաւ իր սուրբ մօրը, ու  
սրբոյն Յովսեփայ: Նայէ ի՛նչ մեծ հնա-  
զանդութիւն է՝ որ Որդին Աստուծոյ հը-  
նազանդի ստեղծուածի մը: Մտմըտա՛ թէ  
ի՛նչ բանի մէջ հնազանդեցաւ: Իր հնա-  
զանդութիւնը երևցուց ամէն խոնարհ աշ-  
խատանքներու մէջ. ինչուան աւել ու  
փայտ կոտրել, որ տեսնողները կարծեցին

Թէ հիւսան մը (տիրակերի) զաւակ է: Ուստի աշխատանքներս անանկ սիրով ու յօժարութեամբ կ'ընէր, ինչպէս թէ հնազանդիւն ըլլար իր պարտքը: Հիմա նայէ՛ թէ ի՞նչ մեծ ամօթ է բու անհնազանդութիւնդ, որ կը ցուցընես մեծաւորներուդ:

Բ. — Յիսուս իր տղայութեան ատեն անդադար աշխատանքի ու աղօթքի հետ էր. չէ թէ պարսպ կենալէն վախ մը ունէր, կամ վտանգ կար փորձութիւն քաշելու, (որ ազատ էր ասանկ բանելէն), հասպա ուզեց բարի օրինակ տալ տկար ու ողորմելի կտրիճներուն, որպէս զի իրենք ալ աշխատանաց ու աղօթքի հետ ըլլան, աշխրբքիս ու սատանային փորձութիւններէն խալրսելու համար:

Գ. — Յիսուս որչափ որ տարւոք կը մեծնար, այնչափ աւելի իր սրբութիւնը դրսէն կ'երևցընէր. չէ թէ մինակ հօր Աստուծոյ առջև՝ այլ և մարդիկներուն կը ցուցընէր, որպէս զի սորվեցընէ մեզի, թէ պէտք է դրսուանց ալ աղէկ երևնալ՝ ուրիշի բարի օրինակ ու շինութիւն տալու համար: Իւ ինչպէս որ Յիսուս առաջ իր հօրը, այսինքն Աստուծոյ աչքին աղէկ երևցաւ, ու ետքը մարդիկներուն, ասանկ



ալ մենք պիտի ջանանք որ է՛ն առաջ Աստուծոյ հաճոյ ըլլանք: Ուստի մեծ ամօթ է մեզի՝ որ անհոգ ենք աղէկ ըլլալու, ուրիշի բարի օրինակ տալու, և ասոր ներհակ՝ մարդկային նկատման համար կեանքերնիս գէշ կ'անցընենք:

Պատու: Չանա՛ որ դատարկ ատեն ամենեին ջանցընես, և եթէ բան մը չունես նա ընելու, կարգա՛ անանկ գիրք մը, որ սուրբ Աստուածածնայ մեծութիւնը, փառքը, մայրական խնամքը ու ջերմեռանդութիւնը սորվեցընէ քեզի: Եւ ըսէ՛ իրեն բոլորով սրտիւ. «Ծառ կենաց, որ զանմահութեան պտուղն ի քէն ետուր նախնոյ մօրն Եւայի՛ ի մահաբեր երկանց ազատելով, բարեխօսեա՛ առ Տէր վասն մերոյ փրկութեան»:

### ԱՂՕԹՔ

Շնորհակալ եմ քեզմէ Աստուած իմ Յիսուս, որ քու տուած բարի օրինակներովդ անուշոցուցեր ես արքայութեան ճամբան. խոնարհ հնազանդութիւնդ կը յորդորէ զիս առանց մտմբտալու խոնարհիլ ու հնազանդիլ իմ հոգևոր հօրս, քու

անդադար աղօթքդ ու աշխատանքդ սիրտ  
կու տայ ինձի բոլոր իմ կեանքս Աստու-  
ծոյ ծառայութեան մէջ անցընելու, քու  
անուշ վարմունքդ ու կենցաղավարութիւնդ  
կը շարժէ զիս սրբութեան ու սուաքինու-  
թեան ետեւ ըլլալու: Սակայն հողեղէն  
ըլլալով տկարութիւնս կը վախցընէ զիս  
աշխատանքէն, ետ կը քաշէ նեղութենէն,  
ու անպտուղ կ'ընէ իմ կեանքս: Կ'աղա-  
չեմ փրկիչ իմ Յիսուս, բաց իմ աչքս,  
զօրացուր իմ սիրտս, որ արհամարհեմ  
զաշխարհ, բանի տեղ չդնեմ նեղութիւնը,  
սիրեմ զիսաչը, ու մեռնիմ քու սիրոյդ հա-  
մար. որպէս զի նմանելով քու կենացդ՝  
արժանի ըլլամ արքայութեան մէջն ալ  
քու տեսութեանդ ու աստուածային փա-  
ռացդ:

## ՔՍԱՆԵՐՈՐԴ ՈՒԹԵՐՈՐԴ ՕՐ

Յիտուսին անապատի մէջ տոռած օրինակ-  
ներուն վրայ

Ա. — Յիսուս անապատին մէջ իր մի-  
նաւորութեամբը կը սորվեցընէ ինձի մէկ

անգրադ կեանք մը: Ինք թէպէտ բանէ  
մը վախ չունէր որ խաբուի, ոչ ընկեր-  
ներէն՝ որ զինքը մոլորցընեն, ոչ խօսակ-  
ցութիւններէն՝ որ իր միտքը դարձընեն,  
սակայն այսու ամենայնիւ ուզեց փախ-  
չիլ քաղքէն ու երթալ անապատը. հապա-  
ես որ ասանկ տկար եմ, ու ամէն սլըզ-  
տիկ բանէն կը խաբուիմ, ինչո՞ւ համար  
չեմ քաշուիր, այլ կ'ուզեմ անդադար  
մարդկանց մէջ կենալ, ու ամենուն հետ  
կենցաղավարիլ.

Բ. — Յիսուս անապատին մէջ իր ծո-  
մապահութեամբը կը սորվեցընէ ինծի նըզ-  
նութիւն մարմնոյ. ինչո՞ւ համար քառսուն  
օր բերանը բան չդրաւ, ոչ պատառ մը  
հաց, և ոչ պուտ մը ջուր, այլ կեցաւ  
անտեղը գազաններու մէջ, ու կը հանգ-  
չէր չոր ցաճաք գետնին վրայ: Մանա-  
ւանդ որ իր սուրբ մարմինը բոլորովին  
հնազանդ էր հոգւոյն ու անմեղանչական:  
Հիմա մամոնտա՞ թէ դուն որ մեղքով ծնե-  
րես, մեղքը կը սիրես, ու կարելի է թէ  
մեղքի մէջ ալ ես, ամենեին չես ուզեր  
նեղութիւն մը քաշել: Յիսուս անմեղ ըլ-  
լալով ասանկ խիստ ծոմապահութիւն կ'ընէ  
քառսուն օր. իսկ դուն մեղաւոր ըլլալովդ՝

սուրբ եկեղեցւոյ դրած քանի մը պահքն  
ալ չես ուզեր պահել, կամ կը ջանաս  
բանով մը թեթեցընել:

Գ. - Յիսուս անապատին մէջ իր ան-  
դադար աղօթքովը կը սորվեցընէ ինծի  
աղօթքի հետ ըլլալ: Ի՞նչ կարօտութիւն  
ունէր Յիսուս աղօթք ընելու. միթէ իրեն  
չնորհք կը պակսէր՝ որ տէրն էր շնոր-  
հաց. միթէ առաքինութեան կը կարօտէր,  
որ լի էր ամէն առաքինութեամբ. միթէ  
գիտութիւն չունէր, որ ինքն էր Աստու-  
ծոյ հօր իմաստութիւնը: Հապա ես որ  
կարօտ եմ շնորհքի, առաքինութեան ու  
գիտութեան, ինչո՞ւ ասանկ քիչ աղօթք  
կ'ընեմ. ու ան ալ չուզելով, գաղջու-  
թեամբ ու խելքս միտքս ասդին անդին  
ցրուելով:

Պատոյ: Ո՛րչափ որ կրնաս ջանա՛ քեզ  
ժողուրտել ու մինաւորիկ հոգևոր կեանք  
մը վարել. մասնաւոր հոգ ունեցիր գործք  
ընելու ատենդ լոտութիւն պահել սուրբ Աս-  
տուածածնայ սիրոյն համար. ու ըսէ առ  
Յիսուս. «Ի՛իր տէր պահապան բերանոյ  
իմոյ, և դուռն ամուր շրթանց իմոց. զի  
մի խոտորեացի սիրտ իմ բանիւ չարու-  
թեան:»:

## ԱՆՕԹՔ

Կը փափաքիմ փրկի՛չ իմ Յիսուս՝ քե-  
 զի հետ անապատը ելլալ. քեզի հետ քա-  
 շուիլ, քեզի հետ նեղութիւն քաշել, ու  
 մեղքերուս ապաշխարութիւնը քու քովդ  
 ընել: Գիտեմ փրկիչ իմ Յիսուս՝ որ քաղցը  
 ես, սիրով կ'ընդունիս քեզի ինկողները.  
 կ'ողջնցընես իրենց տկարութիւնը, կը  
 մաքրես իրենց մեղքերը, կ'արդարացընես  
 իրենց հոգին, ու կը զարդարես աստուա-  
 ծային շնորհքներովդ. ուստի կ'աղաչեմ  
 որ ընդունիս իմ հոգիս ալ, որ զղջալով  
 ըրած մեղքերուն վրայ, կը փափաքի աս-  
 կից ետքը քեզի ծառայելու, ու քու սի-  
 րոյդ համար յանձն կ'առնու աշխարհէս  
 հետանալը, ու ամէն տանջտանաց համբե-  
 րելը. միայն թէ արժանի ըլլայ քու անուշ  
 ձայնդ լսելու, և հոգևոր միխթարութիւնդ  
 տեսնալու իր սրտին մէջ: Ո՛վ Աստուած  
 իմ Յիսուս, դուն ես իմ կեանքս. դուն  
 ես իմ յոյսս, դուն ես իմ փրկութիւնս.  
 դուն ես իմ արքայութիւնս. թէ որ քեզ  
 գտնամ, թէ որ քեզ տեսնամ, թէ որ քեզ  
 ժառանգեմ, կը լիցուի ամէն փափաքս,

ու ես ալ անկարօտ մնալով երանելի կ'ըլ-  
լամ յաւիտեան:

## ՔԱՆԵՐՈՐԳ ԻՆՆԵՐՈՐԳ ՕՐ

Յիսուսին խաչերարկեան վրայ

Ա. — Մտմըտա՛ ըեզի ըրած Աստուծոյ  
բարութիւնը՝ Յիսուսին խաչելութեամբը:  
Հայրն Աստուած իր միածինը ըեզի հա-  
մար զոհ կ'ընէ. ու միածին որդին ալ  
ինք զինքը կու տայ քու փրկութեանդ  
համար: Հերիք էր մինակ մէկ կաթիլը  
իւր սուրբ արիւնին զքեզ փրկելու. սակայն  
իւր բարութեանը համար ուզեց բոլորը  
թափել՝ ինչուան ետքի կաթիլը: Ասկից  
ի զատ, թող իր քաշած շարշարանքնե-  
րը, նախատինքը, թուրը, ծեծը, փուշ  
դասկը, գամերը, ու լեղին: Նայէ՛ որ Աս-  
տուած սիրեց զքեզ ամենէն աւելի, իսկ  
դու կ'անարգես զինքը, ու ամէն բանէն  
վար ես դրեր զանիկայ:

Բ. — Մտմըտա՛ Աստուծոյ սաստկու-  
թիւնը ու արդարութիւնը Յիսուսին վրայ.  
Նայէ՛ թէ իր միածին որդին ի՛նչպէս նա-

խատական մահուան տակը ձգեց աշխարհիս մեղացն համար: Աս մեղքերս թէպէտ իրը չէր, սակայն մարդկանց փրկութեանը համար առեր էր իր վրայ. ուստի պէտք եղաւ որ քաշէ: Թէպէտ ինքն անմեղութիւն ու սրբութիւն էր, բայց ուրիշի մեղացը համար յանձն առաւ խաչուիլ: Թէպէտ միաժին որդի էր Աստուծոյ ու գառն անարատ, սակայն մեղաւոր երեցաւ, ուստի պէտք եղաւ որ մեռնի և րկու աւազակաց մէջ, մեռնի իբրև իր հօրը երեսէ ինկած, մեռնի իբրև մէկ վատանուն մը: Նայէ թէ ի՞նչ սոսկալի բան է մեղքը, որպիսի անողորմ դահիճ է, որ Աստուածորդին խաչ հանել տուաւ:

Գ. — Մտմբտա՛ Աստուծոյ բարութիւնն ու սաստկութիւնը: Աղէկ միտքդ դիր աս նրկու ճշմարտութիւնը, որ Աստուած քու վրայդ ալ կը բանեցընէ: Թէ որ Յիսուս քու հոգւոյդ փրկութեանը համար մեռնիլ ուզեց խաչին վրայ, ուրեմն փրկութիւնը մեծ ու հարկաւոր բան մըն է, և նշան աստուածային բարութեան. ուստի վայրեզի, թէ որ դատապարտուիս: Թէ որ Աստուծոյ արդարութեամբը շուրոովին սուրբ ու անմեղ Յիսուսը ասանկ չարչա-

քու սքանչելիքդ՝ ուզեցիր մատնուիլ ան-  
 ողորմ զինուորաց ձեռքը. կապուիլ, չար-  
 չարուիլ, փշով պսակուիլ ու էն ետքը խա-  
 չին վրայ մեռնիլ, որպէս զի իմ անբ-  
 մեղքերուս թողութիւն ըլլայ, վէրքերս  
 բժշկուի, սնցած հոգիս լուացուի քու սուրբ  
 արիւնովդ: Ո՛վ իմաստութիւն յաւիտենա-  
 կան, չգիտեմ թէ ի՞նչ բանով շնորհա-  
 կալ ըլլամ քեզի, որ ասանկ մեծ բարե-  
 ըրարութիւն ըրեր ես ինձի. մինակ մամը-  
 տալը քու սիրոյդ իմ վրաս՝ կ'ուրախա-  
 ցընէ զիս ու կը յորդորէ որ ես ալ իմ  
 կեանքս բոլոր քեզի ընծայեմ: Ո՛վ Տէր  
 իմ խաչեալ՝ կը փափաքիմ քեզի հետ  
 Գողգոթա ելլել, քեզի հետ խաչուիլ, քե-  
 զի հետ մեռնիլ ու քեզի հետ թաղուիլ  
 աշխըրքիս մէջ, որ կարենամ քեզի հետ  
 ալ յարութիւն առնուլ ու մտնալ արքա-  
 յութիւն: Կ'աղաչեմ փրկիչ իմ Յիսուս  
 ւապաւորէ՛ իմ սիրտս քու չարչարանքնե-  
 րուդ յիշատալը, որպէս զի անուշնայ ին-  
 ձի քեզի համար չարչարուիլը, քու սի-  
 րոյդ համար մեռնիլը աշխըրքիս վրայ,  
 որով կ'երենայ թէ ճշմարիտ քու աշա-  
 կերտդ եմ, ու կը փափաքիմ քեզի նսա-  
 ննլու:



քու սքանչելիքդ՝ ուզեցիր մատնուիլ ան-  
 ողորմ զինուորաց ձեռքը. կապուիլ, չար-  
 չարուիլ, փշով պսակուիլ ու էն ետքը խա-  
 չին վրայ մեռնիլ, որպէս զի իմ ձանր  
 մեղքերուս թողութիւն ըլլայ, վէրքերս  
 բժշկուի, սնցած հոգիս լուացուի քու սուրբ  
 արիւնովդ: Ո՛վ իմաստութիւն յաւիտենա-  
 կան, չգիտեմ թէ ի՞նչ բանով շնորհա-  
 կալ ըլլամ քեզի, որ ասանկ մեծ բարե-  
 րարութիւն ըրեր ես ինձի. մինակ մամը-  
 տալը քու սիրոյդ իմ վրաս՝ կ'ուրախա-  
 ցընէ զիս ու ի՞նչ յորդորէ որ ես ալ իմ  
 կեանքս բոլոր քեզի ընծայեմ: Ո՛վ Տէր  
 իմ խաչեալ՝ կը փափաքիմ քեզի հետ  
 Գողգոթա ելլել, քեզի հետ խաչուիլ, քե-  
 ղի հետ մեռնիլ ու քեզի հետ թաղուիլ  
 աշխրբքիս մէջ, որ կարենամ քեզի հետ  
 ալ յարութիւն առնուլ ու մտնալ արքա-  
 յութիւն: Կ'աղաչեմ փրկիչ իմ Յիսուս  
 ւապաւորէ՛ իմ սիրտս քու չարչարանքնե-  
 րուդ յիշատալը, որպէս զի անուշնայ ին-  
 ձի քեզի համար չարչարուիլը, քու սի-  
 րոյդ համար մեռնիլը աշխրբքիս վրայ,  
 որով կ'երենայ թէ ճշմարիտ քու աշա-  
 կերտդ եմ, ու կը փափաքիմ քեզի նսա-  
 նելու:

## ՆՐԵՍՆԵՐՈՐԻ ՕՐ

Սառքը Աստուածածնայ ցառոց վրայ

Ո. — Ամէն ցաւերուն մէջ, որ սուրբ  
 Աստուածածին քաշեց Յիսուսին չարչարանացն համար, երեքը եղան աւելի սաստիկ սուրեր՝ որ խոցեցին իր մայրական գրեթե սիրտը: Առջինը եղաւ կորսնցընելը իր զեղեցիկ, ամենասուրբ ու քան զամէնը անմեղ որդին: Ինչ ծանր ու անտանելի ցաւ է տեսնալը մէկ հաստիկ որդին վիրաւորուած, ձեռքը ոտքը ծակուած, երկու աւազակի մէջ կախուած ու մեռած. մանաւանդ անանկ ազուոր հասակի մէջ: Աս ալ կը մտմբտար՝ թէ Յիսուս որո՞ն համար կը Դափէ իր սուրբ արիւնը: Թէ՛ պէտ ամէն մարդու համար կը չարչարուէր, սակայն անոնց մէջ պիտի գտուի բեզի պէս մէկ ուղղափառ բրիստոնեայ մը, որ Յիսուսին չարչարանքները բանի տեղ չդնելով, պիտի ուզէ մեղանջել ու դժոխք երթալ: Գիտես թէ ինչ մեծ կսկիծ ու ցաւ կ'ըլլայ իր սրտին. ինչու որ կը

տեսնէ թէ Յիսուսին չարչարանքը ամե-  
նեին օգուտ մը չէ ըրած անոր:

Բ. — Երկրորդ ցաւը եղաւ սեանալը ,  
թէ իր զաւկին արիւն թափելը չէ թէ  
մինակ անօգուտ պիտի ըլլայ շատ քրիս-  
տոնեաներուն , այլ և պատճառ սաստիկ  
տանջանաց դժոխքին մէջ . վասն զի նոյն  
արիւնը պիտի ամբաստանէ , երեսնուն  
զսփնէ ու դատապարտէ զիրենք : Նայէ  
թէ ինչ ծանր ցաւ է սուրբ Աստուծա-  
ծրնայ՝ ան մարդիկներուն դատապարտուի-  
լը , որ իրեն որդեգիր են եղեր : Քեզի հա-  
մար կորսնցընէ իր զաւակը , ու դուն ալ  
չփրկուիս . այլ մանաւանդ ան պատճա-  
ռաւը աւելի տանջուիս : Ինչպէս կրնայ  
մէկ զթած մայր մը դիմանալ աս ցաւե-  
րուս :

Գ. Երրորդ ցաւը եղաւ մտածելը , թէ  
շատ քրիստոնեայք բանի տեղ պիտի չղնեն  
էր զաւկին ամենասուրբ արիւնը , որ զի-  
րենք պիտի վերկէ . այլ մանաւանդ անով  
աւելի գէշ ու անհոգ պիտի ըլլան : Անանկ  
կ'երևցընենք , որ թէ Յիսուս սուրբ Աս-  
տուածածնայ միածին որդին մեզի համար  
մեռած չըլլար , մենք այսչամ մեղք չէինք  
ըներ . ինչու որ հիմա կը մեղանչենք՝ յու-

սալով թէ՛ Յիսուսին սուրբ արիւնը մեզի  
կ'ողորմի. չենք դադրիր մեղքէն ինչուան  
մեռնելու ատենը ատ յոյսը ունենալով,  
թէ Յիսուսին թափած արիւնը մեզ կը  
խալըսէ: Ասոնք ալ հերիք չեն, այլ և  
գործքով կը հայհոյենք, ու բանի տեղ չենք  
դնէր իր սուրբ արիւնը: Ինչ սոսկալի  
ցաւ ու վիշտ է սուրբ Աստուածածնայ  
քաշածը, զէջ ու անկարգ քրիստոնեանե-  
րէն:

Պատշա՛: Ինչ նեղութիւն որ քաշելու ըլ-  
լաս այսօր, ամենուն ալ սիրով համբերէ՛  
սուրբ Աստուածածնայ ցաւերուն համար,  
ու ըսէ՛ իր բերնէն. « Իմ միածին գառն  
անպարտական՝ ընդ ո՞ր մեղաց կաս դու  
ի խաչին »:

## ԱՂՕԹԻՔ

Ո՛վ ցաւագին կոյս մայրդ Աստուծոյ,  
ճանչնալով որ քուկին սաստիկ ցաւերուդ  
պատճառը իմ ապերախտութիւնս է եղեր,  
կը ցաւիմ բոլորով սրտիւ, ու կը դիմեմ  
խոնարհութեամբ քու ստքդ, որպէս զի  
արցունքովս մարեմ սրտիդ կրակը՝ որ իմ  
մեղքերովս վառեր եմ. սրտիս ցաւովը թե-

Թեցընեմ քու կակիծդ. ճշմարիտ ապաշ-  
 խարութեամբս մխիթարեմ քու վշտացեալ  
 սիրտդ: Կ'աղաչեմ զքեզ մայր ողորմու-  
 թեան՝ նայէ՛ իմ վրաս մայրական սիրովդ,  
 որով ծնար զիս Յիսուսի խաչին տակը:  
 Որդի եմ քու ցաւոցդ, մի՛ թողուր զիս՝  
 որ մոռնալով քու մայրութիւնդ հեռանամ  
 քեզմէ. այլ քեզի հետ կենամ Յիսուսի  
 խաչին քով. քեզի հետ լամ, քեզի հետ  
 ցաւիմ քու Միաճնիդ ինծի համար քաշած  
 նեղութիւններուն վրայ: Վա՛յ ինծի, այս-  
 չափ ատեն է որ իմ անկարգ վարուքս  
 հեռացեր եմ քու որդիութենէդ, փախեր  
 եմ խաչէն, չեմ ուզած հետեւիլ ցաւա-  
 գնեալ մօրդ, վիրաւորեր եմ սիրտդ, աւել-  
 ցուցեր եմ կակիծդ. ուստի անարժան գրտ-  
 նրւեր եմ մայրական խնամոցդ. սակայն  
 հիմա կ'առաջադրեմ ճշմարիտ սրտիւ, ու  
 կը փափաքիմ մեռնիլ որդիութեանդ մէ-  
 ջը: Կ'աղաչեմ մայր ողորմութեան, ցը-  
 ցուր ինծի քու զթութիւնդ՝ նորէն ընդու-  
 նելով զիս քեզ որդի ու ծառայ մշտնջե-  
 նաւոր. տալով ինծի շնորհք՝ հաստատուն  
 մնալու առաջադրութեանս վրայ:

## ԵՐԵՄՆԵՐՈՐԴ ԱՌԱՋՆԵՐՈՐԴ ՕՐ

Յիսուսի սիրոյն վրայ

Ա. - Թէ որ կ'ազես աշխարհքիս մէջ  
աղէկ բան մը սիրել, սիրէ՛ զՅիսուս քու  
փրկիչդ, որ սիրելի ու գեղեցիկ է զան  
զամէն մարդիկ. զիտցիր որ իր աստուա-  
ծային գեղեցկութեանն ամենեին բան մը  
չի հասնիր: Ի՛նչ մեծ խենդութիւն է սի-  
րելը մէկ պատիկ մատնի մը, մէկ քարի  
կտոր մը, մէկ քուրջ մը, մէկ հողաթափ  
մը ու այլ չնչին բաներ. և չուզելը սի-  
րել զՅիսուս, որ ճշմարիտ մեծութիւն ու  
բովանդակ գեղեցկութիւն է:

Բ. Դուն որ զՅիսուս չես սիրեր, զիտ-  
ցիր որ Յիսուս զքեզ կը սիրէ. ու անանկ  
չատ կը սիրէ, որ պատիկուց ի վեր իր  
ամէն մտմբտուքը եղեր է քու փրկու-  
թեանդ համար: Մանուկ ելաւ քեզի հա-  
մար, աշխատեցաւ խանութի մէջ, քարո-  
զեց՝ ծանր ծանր նեղութիւններ քաշելով  
քեզի համար. համբերեց նախատանաց,  
խուրի, բամախ ու ծեծի: և իր սուրբ ա-

ըիւնը թափեց ու մեռաւ քեզի համար :  
 Թէ որ աս քաշածները քիչ կ'երեւնան քե-  
 զի, զիտցիր որ անոնցմէ աւելի աս բանս  
 ալ ըրաւ, որ զինքը բոլոր քեզի թողուց,  
 իր մարմինը կերակուր ընելով, ու սուրբ  
 արիւնը ըմպելիք: Մտմշտա՛ թէ ինչ այլ  
 աւելի բան կրնար ընել զքեզ շարժելու  
 համար՝ որ սիրես զինքը: Մէկ պզտիկ  
 անասուն մը թէ որ առջևդ խաղայ ու ցաթ-  
 կրտէ, կամ տղայ մը որ քեզ անուշ նա-  
 յի, խնտացընէ՝ անոր սիրովը կը խենդե-  
 նա: ու սրտիդ մէջ կ'ուզես դնել. հապա  
 Յիսուս որ այսչափ մեծ սիրով սիրեր է  
 ու կը սիրէ զքեզ, ինչպէս ամենեին հոգ  
 չունիս զինքը սիրելու:

Գ. — Դրեր ես միտքդ թէ դուն կը սի-  
 րես զՅիսուս, ինչու որ շատ հեղ բերնով  
 կը զրուցես իրեն, թէ «Յիսուս կը սիրեմ  
 զքեզ»: Սակայն պէտք է հաւատքով, յու-  
 սով ու գործքով սիրել, չէ թէ բերնով  
 ըսել ու սրտանց ատել: Թէ և մեղաւոր  
 ըլլաս, պէտք չէ որ Յիսուսը սիրելէն ետ  
 կենաս. զիտցիր որ Յիսուսի սէրը զքեզ  
 սուրբ կ'ընէ: Ինքը քու ետևէդ կը վազէ՝  
 զքեզ վաստըկելու համար. կը բանայ իր  
 սիրտը քեզի ցուցընելու համար իր աս-

տուածային սէրը՝ որ ունի քու վրադ. զանազան շնորհքներով կը շարժէ սիրտդ որ սիրես զինքը: Քարէ սիրտ սլիտի ունենաս որ չշարժիս զինքը սիրելու:

Պատու: Մասնաւոր ջերմեռանդութեամբ ազօթք ըրէ Յիսուսի ու սուրբ Աստուածածնայ զթած սրտերուն, որ քու սիրտդ վառան աստուածային սիրով, ու ըսէ բուրրով սրտիւ. «Սէր անուն Յիսուս, սիրով քո նմլեա՛. սիրտ իմ քարեղէն. վասն զթութեանդ վասն ողորմութեանդ վերբասին կեցո՛»:

## ԱՂՕԹՔ

Ո՛վ սէր և զթութիւն անբաւ տէր իմ Յիսուս Քրիստոս, քանի որ կը մտմըտամ ինծի ըրած բարիքներդ, կ'ուրախանամ ու կը ցնծամ հոգւով, սեանալով թէ որչափ սիրեր ես զիս: Շնորհակալ եմ Աստուած իմ, զոհանամ ու կը փառաւորեմ քու մեծութիւնդ, քու զին մարդասիրութիւնդ ու բարութիւնդ որ ցըցուցեր ես ինծի. իսկ ես չունենալով արժանաւոր բան մը քեզի ընծայելու, կ'առաջագրեմ բոլոր սրտով սիրել զքեզ, Տէ՛ր զօ-



րութիւն իմ, Տէ՛ր օգնական իմ, ապաւէն  
 իմ և փրկիչ իմ: Դուն որ քու բարու  
 թեանդ համար արժանի ես ամենայն սի-  
 րոյ, քու մեծութեամբդ արժանի ես ամե-  
 նայն փառաց, կը ցաւիմ որ իմ կուրու-  
 թեամբս ինչուան հիմա չեմ ճանչցած,  
 չեմ մեծարած, ու չեմ սիրած զքեզ Աս-  
 տուած իմ Յիսուս: Կ'արդաչեմ խոնար-  
 հութեամբ՝ մի՛ նայիր իմ անարժանու-  
 թեանս, մի՛ սրդողիր իմ ապերախատու-  
 թեանս, մի՛ ձգեր զիս քու անուշ երեսէդ,  
 այլ տուր ինձի շնորհքդ, որ կարենամ  
 ասկից ետքը բոլոր կեանքս քու ծառայու-  
 թեանդ մէջ անցընել, քեզի համար մեռ-  
 նիլ, ու քու սիրովդ տոչորուիլ, ինչուան  
 հասնիմ քովդ արքայութեան մէջ:

